
«ԱՐՈՒ-ԼԱԼԱ ՄԱՀԱՐԻ» ՊՈԵՄԻ ՀԵՐՈՍԸ ԵՎ ՀԵՂԻՆԱԿԸ

ԱՎԻԿ ԻՍԱՀԱԿՅԱՆ

Հայոց պոեզիայի գագաթներից մեկն է Ավետիք Բսահակյանի «Արու-Լալա Մահարի» պոեմը: Նա վաղուց ի վեր մտել է համաշխարհային ասպարեզ և մեր ազգային գրականության գերագույն նվաճումներից մեկն է:

Այսօր դժվար է ասել, թե Բսահակյանի մոտ ինչպես ծագեց «Արու-Լալա Մահարի» պոեմը գրելու գաղափարը: Ոմանք մտահղացման այդ պահը կապում են հետևյալ պատմության հետ. երբ Բսահակյանը գնացքով Թիֆլիսից Գյումրի մեկնելիս է եղել, նստած իր հայրենակից մեքենավարի խցիկում, լուսաբացին, արևի առաջին ճառագայթների ներքո, հորիզոնում տեսել է ուղտերի մի քարավան, որը առևտրային հին ճանապարհով Պարսկաստան աղ տանելիս է եղել: Եվ գնացքին զուգընթաց գնացել է ուղտերի քարավանը, գնացքի անիվներն ասես արձագանքել են քարավանի քայլքին. այսպես է գտնվել բանաստեղծի այդ օրերի խոհերին համաշունչ թե՛ ապագա պոեմի պատկերը, թե՛ քարավանի դողանջների համահունչ ապագա ստեղծագործության ռիթմը:

Այս պատմությունը հիշատակել է Բսահակյանը, և այն, անշուշտ, նպաստել է հրաբխի լավայի պես երկար տարիներ Բսահակյանի մոտ հասունացած ու շիկացած մտքերի ու խոհերի ժայթքմանը, ինչը վերածվեց ստեղծագործական մի այնպիսի զորեղ երկի արարման, ինչպիսին «Արու-Լալա Մահարի» պոեմն էր: Պոեմի բնագրում նշված է ստեղծման ժամանակը. «Գրված 1909 թ. 30-ն օգոստոս մինչև 2 սեպտեմբեր և 1910 թ. 27-ն մարտի մինչև 4-ն ապրիլի Ղազարապատում»¹:

«Արու-Լալա Մահարին» ստեղծվեց պատմական մի այնպիսի ժամանակահատվածում, երբ խոշոր գրավականով ազատվել էր բանտից և շուտով պիտի մեկնէր հայրենի երկրից ու տնից, հրաժեշտ տար մորը, հարազատներին ու ընկերներին և երկար, շա տ երկար տարիներ ստիպված էր բացակայել: Կովկասում նրա կյանքը ռուսականական մշտական հսկողության տակ էր, իսկ դիմացը դատական պրոցեսն էր՝ սիրիայան աքսորի սպառնալիքով:

Բսահակյանը հրաշալի գիտակցում էր, որ Կովկասից հեռանալու որոշումը ընդունելով ինքը պիտի հեռանար ոչ միայն հայրենիքից, այլև իր կյանքի մի նշանակալից՝ թե ստեղծագործական, թե անձնական առումով հազեցած շրջանից. բացառիկ պոեմի ստեղծում, ամուսնություն, որդու ծնունդը: Գիտեր, որ վերջ էր դնելու իր կյանքի «աստեղային շրջանին»՝ հեռանալով բնականոն կյանքից և գնալով դեպի

¹ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Ավ. Բսահակյանի ֆոնդ, № 234-II:

անհայտն ու անորոշը: Եվ գնալուց առաջ նա այնպիսի մի երկ պիտի ստեղծեր, որ նշանավորեր իր ստեղծագործության «աստեղային ժամը»:

Իսահակյանն «Աբու-Լալա Մահարի» պոեմով հայ բանաստեղծությանը հաղորդեց աննախադեպ փիլիսոփայական իմաստ: Բարձրացնելով ու շոշափելով գրեթե նշանակություն ունեցող համամարդկային հարցեր, դրվածքներ, նա հասավ այնպիսի ընդհանրացումների, եզրահանգումների, որ իրենից առաջ բնորոշ է եղել միայն Նարեկացուն:

Եվ Նարեկացու հանճարեղ պոեմի ստեղծումից ինը դար անց Իսահակյանը հայ փիլիսոփայական պոեզիան էականորեն առաջ մղեց, ի գորու եղավ այն զարգացնել համամարդկային արժեքների տեսանկյունով: Պոեմի ռուսերեն թարգմանիչ Վ. Բրյուսովը գրում է. «Իսահակյանը հասնում է կատարյալ խորհրդանշանային ընդհանրացումների և արդյունքում կերտում լավագույն պոեմներից մեկը բոլոր ժամանակների համար»²:

Պոեմի վերնագիրը՝ «Աբու-Լալա Մահարի», փոքր-ինչ կրճատված ձևն է X–XI դդ. արաբ հանճարեղ բանաստեղծ Աբու-լ-Ալա ալ-Մահարրիի անվան. նա ծնվել է սիրիական Մահարրատ ան-Նուման կամ Մահարրա քաղաքում 973 թ. և մահացել 1057 թ.: Բանաստեղծը ողջ կյանքն ապրել է հարազատ քաղաքում և միայն մեկ տարի (1010 թ.)՝ արաբական խալիֆայթի կենտրոն Բաղդադում: Դեռևս չորս տարեկան հասակում ծաղիկ հիվանդության պատճառով նա զրկվել է տեսողությունից: Տասնմեկ տարեկանից սկսել է բանաստեղծություններ գրել: Եղել է բացառիկ ունակությունների տեր անհատ. իմացել է բերանացի ողջ Ղուրանը և հարյուրավոր այլ գրքեր, իր գրվածքները պահել է մտքում և թելադրել է մերձավորներին: Գրքերը, որ նրա համար բարձրաձայն ընթերցում էին, նա հիշում էր ամենը ծայրից ծայր: Ալ-Մահարրին ճշմարիտ մի «գերմարդի» կերպար էր, որը տիրապետում էր «իր ժամանակի բոլոր գիտելիքներին»: Արդեն 20 տարեկանից նա ճանաչված բանաստեղծ էր և հեղինակավոր սուֆի փիլիսոփա:

Ընթերցողն արդյոք չի տեսնում նմանության որոշակի եզրեր երիտասարդ ալ-Մահարրիի և երիտասարդ Իսահակյանի կյանքի փաստերի և մտածողության միջև: Իսկ սա արդեն էական հանգամանք է Իսահակյանի պոեմի հերոսի ընտրության տեսակետից: Աբու Մահարրին թողել է հազարավոր բանաստեղծական տողեր և հարյուրավոր կրոնական ու խոհափիլիսոփայական աշխատություններ: Ընդ որում, ալ-Մահարրին հին արաբական գրականության մեջ նոր բարձունքի է հասցրել աֆորիզմի ժանրը: Նրա հայտնի «Խամզայի գրքում» ներկայացված են մեծաքանակ աֆորիզմներ, որոնք լայն տարածում են գտել արաբական աշխարհում:

Հայտնի է, որ Բաղդադի նշանավոր խալիֆան՝ Աբուլ Կասիմ ալ Մահրիբին, որը եղել է ալ-Մահարրու ժամանակակիցը, հովանավորել է նրան և եղել նրա տաղանդի մեծ երկրպագուն: Հին մատյանները վկայում են, երբ ալ-Մահարրին կարդացել է նրան իր բանաստեղծությունները խալիֆայթում տեղի ունեցած ավերումների մա-

² *Բնագիրը տե՛ս* u Национальная библиотека Российской федерации, отдел рукописей, ф. В. Брюсова, № 386, 51, ед. хр. 1, л. 50.

սին, չքավոր ու աղքատ խավի տառապանքների մասին ալ-Մահրիրին արտասվել է. բանաստեղծը չի վախեցել ճիշտը գրել³: Հատկանշական է, որ Բսահակյանն ունի մի արձակ լեզենդ՝ «Անհաղթ խալիֆան»՝ գրված հենց 1909 թ., ուր նա պատկերում է պոեզիայի և երգի սիրահար մի երիտասարդ խալիֆայի՝ որի կերպարը, հիրավի, միակ դրականն է Բսահակյանի մոտ հանդիպած արևելյան տիրակալների այս բնույթի կերպարների շարքում: Հավանական է, որ Բսահակյանին այս լեզենդը ստեղծելու հիմք են ծառայել արևելյան հին աղբյուրները, որոնք նա ուսումնասիրել է պոեմը գրելու շրջանում:

Ակնհայտ են նաև Աբու-լ-Ալա ալ-Մահարրու ստեղծագործության յուրովի արձագանքները, զուգադիպումները, առնչությունները հայ հանճարեղ բանաստեղծ Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» երկի հետ: Թեև նրանք միմյանց չեն ճանաչել, և չեն էլ կարդացել, սակայն եղել են ժամանակակիցներ, ապրել են պատմական նույն ժամանակահատվածում և համեմատաբար իրարից ոչ հեռու տարածքում՝ Միջագետքի ավազանում: Հայ և արաբ բանաստեղծներն ունեցել են հավատքի տարբեր ակունքներ. և հսկայական է տարբերությունը նրանց դավանանքների միջև: Բայց, իր տեսակի մեջ, Արարչին պաշտելու ու ծառայելու մղումով նրանցից յուրաքանչյուրն անկեղծ է ու մեծ նվիրյալ: Այս տեսանկյունից հնարավոր է բազում զուգահեռներ տեսնել նրանց երկերի միջև՝ Նարեկացու գլուխգործոցը՝ «Մատյան ողբերգությանը», որը ծայրեծայր «Բան ի խորոց սրտի առ Աստված» է՝ այն տատասկոտ ճամփան է, որով մարդը պիտի անցնի, իր հայացքը Աստծուն ուղղելու իրավունք ստանալու համար:

Նույն մղումով է գրված և Աբու-լ-Ալա ալ-Մահարրու նշանավոր «Ներման ուղերձ» կամ «Գիրք ներումի» ծավալուն երկը, որը բաղկացած է 10000 բեյթից և 120 կուրրասից, և յուրաքանչյուր բեյթն սկսվում է «Ներում խնդրիր Ալլահից» խոսքերով: Եվ ինչպես կարծում են արաբագետները, դա «հորդորանքի գիրք» է, ուր մարդը մեղա է գալիս տիրոջ առաջ իր գործած արարքների, ունայն ապրած կյանքի համար⁴:

Այնպես որ, Բսահակյանը չէր կարող չզգալ որոշակի նմանություն «Մահարրացի իմաստունի» և Նարեկա վանքի մեծ մտածողի միջև: Ինչպես և մենք, այսօր, Բսահակյանի պոեմի մեկնաբաններս, չենք կարող չտեսնել ու չզգալ շատ ավելի խորքային կապեր «Մահարրացի իմաստունի» և Բսահակյանի պոեմի հերոսի միջև, քան կարող է թվալ առաջին հայացքից:

Բսահակյանի թե՛ խոհերը, թե՛ եզրակացությունները նույնպես համամարդկային են և համընդհանուր, ինչպես նրա հերոսներն ու նրանց ճակատագրերի խորհուրդը: Այս առումով Չինգիզ խանը, Շի-Հուանգ-Տի Բողդիխանը հեղինակային գաղափարը արտահայտող խորհրդանշան կերպարներ էին: Սակայն արևելյան լեզենդների հեղինակ Բսահակյանը ոչ պատմաբան է, ոչ վիպասան: Բսահակյանի

³ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Բ. Я. Ш и д ф а р. Абу-ль-Аля-Маарри. М., 1985, с. 61–67.

⁴ *Տե՛ս* А л ь - Д ж у н д и. История Мааррат ан-Нуман. Дамаск, 1963 и И. Ю. К р а ч к о в с к и й. Аль-Мутанабби и Абу-л-Ала. Избранные сочинения. Т. 2. М.-Л., 1956.

մտեցումը խոհական է: Խոսքը տիպական-ընդհանրական հատկանիշների, աշխարհի և բռնակալ մարդու, աշխարհի ու բանաստեղծի փոխհարաբերությունների մասին է: Չինգիզ խանի բնությունը առավել ուժով մարմնավորում է բռնության գաղափարը, նա չարի խորհրդանիշն է, ինչպես Մասդին՝ արարող մարդու: Այս առումով Մասդինի անվան տեղ կարող էր լինել Ռուդաքիի, Ֆիրդուսու, Նարեկացու կամ որևէ այլ մեծ ստեղծագործողի անունը: Կարևորը երևույթի էությունն է: Պատմական անունները սոսկ նրա կեղևն են կազմում: Մակայն այլ է «Աբու-Լալա Մահարի» պոեմը:

Հայ գրականագիտության մեջ էլ միշտ գերիշխող է այն տեսակետը, թե արաբ բանաստեղծն Իսահակյանի համար սոսկ Հին Արևելքի մեծ բանաստեղծի խորհրդանիշ է, որ Իսահակյանը պոեմը ավելի շուտ գրել է իր մասին, քան թե X դարի արաբ բանաստեղծի: Եվ որ Աբու-Մահարիի անունը սոսկ առիթ էր, պատրվակ՝ ստեղծելու իր մեծ գործը և դրանով իսկ բացահայտելու թե՛ սեփական ներաշխարհը, թե՛ աշխարհի իր ըմբռնումը:

Հարկ է ասել, որ այս տեսակետը ինչ-որ տեղ ճշմարիտ է, սակայն միայն որոշակի չափով: Իրականում, Մահարրա քաղաքում ապրող բանաստեղծն ու մտածողը շատ ավելի մեծ ազդեցություն է թողել Իսահակյանի վրա, քան մենք ենթադրել ենք: Այս հանգամանքը Իսահակյանի պոեմի մասին իրենց ուսումնասիրություններում ընդգծել են և՛ Ե. Ֆրանգյանը⁵, և՛ Էդ. Ջրբաշյանը⁶: Իսկ մեր օրերում գրականագետ Ա. Եղիազարյանը «Աբու Լալա Մահարին» և «Աբու-լ-Ալա ալ-Մահարին» հոդվածում իրավացիորեն գրում է. «... արաբ բանաստեղծ Աբու-լ-Ալա ալ-Մահարին պետք է ընկալվի ոչ թե իբրև մեկը, որը սոսկական ազդակ է տվել Իսահակյանի պոեմի ստեղծմանը, այլև իբրև բանաստեղծ ու մտածող, որի հայացքները, ողջ աշխարհընկալումը ներքին խոր հարազատություն ունեն բանաստեղծի հոգևոր աշխարհի հետ»⁷: Եվ այդ շատ էական կապը Ա. Եղիազարյանը տեսնում է Հին Արևելքի փիլիսոփայության հոռետեսական ուղղության մեջ, որի կարկառուն ներկայացուցիչն էր միջնադարի արաբ մեծ բանաստեղծը:

Աբու-լ-Ալա ալ-Մահարին շատ բարդ և նշանակալից երևույթ է ողջ արաբական աշխարհում: Ինչպես իր ժամանակին Մերձավոր Արևելքում, այնպես էլ այսօր մուսուլմանական ողջ աշխարհում նա ամենակարգավոր և ճանաչված բանաստեղծ-փիլիսոփաներից է: Կենդանության օրոք մեծ հեղինակություն է վայելել, նրան՝ որպես «Մահարրացի իմաստունի», այցի են եկել հազարավոր մարդիկ, հարգել և երկրպագել են որպես բանաստեղծական արվեստի անմրցելի վարպետի: Առավել հայտնի են նրա գրական ժառանգության մեջ երկու գիրք՝ «Ներման ուղերձ» («Ռիսալաթ ալ Ղաֆրան») և «Կարևորի անկարևորությունը» («Ալ-Լուգուվիյաթ»):

⁵ Ե. Ֆրանգյան. Ավ. Իսահակյանը, որպես մտածող. «Գեղարվեստ» (Թիֆլիս), 1911, №4, էջ 141-147:

⁶ Տե՛ս Էդ. Ջրբաշյան. Թումանյանի պոեմները. Ժամանակակիցներ և հաջորդներ, Երևան, 1986, էջ 429-445:

⁷ Ա. Եղիազարյան. XX դարի հայ գրականություն. դեմքեր և խնդիրներ, Երևան, 2002, էջ 69:

Առաջին գրքի թեմային թերևս կարող է արձագանքել Դանթեի «Աստվածային կատակերգություն» պոեմը: Սա արար բանաստեղծի ճամփորդությունն է դեպի դժոխք և դրախտ, որի ընթացքում այլաբանորեն քննադատվում են դուրանյան մի շարք պատկերացումներ անդրշիրիմյան աշխարհի վերաբերյալ, որոնք ժամանակակիցների կողմից դիտվել են որպես «անհավատության» կոչեր, իսկ երկրորդը՝ «Ալ-Լուզումիյաթ» բանաստեղծությունների ժողովածուն իրավամբ համարվում է արաբական խոհաքնարական պոեզիայի գլուխգործոցներից մեկը:

Ահա այս երկրորդ գիրքն էլ իր էությամբ ձայնակցում է Բսահակյանի խոհերին ու սրամաղորությանը: Այն հիմնորոշ թեմաները, որոնք ժողովածուում բարձրացնում է ալ-Մահարրին, վերաբերում են ոչ միայն իր ժամանակի կարևոր հարցերին, այլև դուրս են գալիս տվյալ ժամանակի սահմաններից: Նրա քննադատական ասեղիքի կիզակետում են իրականության սոցիալական անարդարությունը, հասարակության օրենքները, որոնք հիմնված են բռնության ու կեղծիքի վրա, ինչպես և մարդկային արարքների նսեմությունն ու անբարոյականությունը.

*Օ՛ դու, հիմարների համայնք, գուրկ արժանիքներից,
Դու նման ես ոչխարների հոտի արուին, գրկված բանիմաց հովվից՝*

Ալ-Մահարրին ընկալում է չարն ու տառապանքը՝ որպես մարդկային կյանքի հավերժ ուղեկիցներ.

*Օ՛ կյանք, նողկանքի մայր, Ալլահը թող անիծե նման մորը,
Որ կործանում է իր զավակներին, չի գնահատում և կորցնում է նրանց:*

Բանաստեղծը «Ալ-Լուզումիյաթում» տառապագին մտորում է կյանքի և մահի փոխառնչության, տիեզերքի անվերժանելիության, մարդկային կյանքի անցողիկության վերաբերյալ ու իր մտորումներում հասնում է ողբերգական ընդհանրացումների: Նա իր բանաստեղծություններում կարծես ավելի ձգտում է քանդել ընդունված աշխարհակարգը, քան թե ստեղծել նորը.

*Աստղերն արդյոք մահացած են, թե՞ զգում են.
Նրանք ունեն անբանականություն, թե՞ չունեն բանականություն և զգացումներ,
Դուք պատմե՛լ էք աստղագուշակին, որ մահն է գալու,
Իսկ պատմում եք այն մասին, որ Հարություն է լինելու:*

Եվ ալ-Մահարրիի ողջ գիրքը հարուստ է աֆորիզմներով. բանաստեղծական արվեստի ժանր – միջոց, որը շատ էր տարածված միջնադարյան արաբական պոեզիայում: «Ալ-Լուզումիյաթում» իրականությունը պատկերանում է քառսային ան-

⁸ Ալ-Մահարրիի չափածո հատվածների տողացի թարգմանությունները արված են մեր կողմից հետևյալ գրքերից А б у - а л ь - А л а а л ь - М а а р и. “Лузум ма ла ясам” (“Обязательность необязательного”). Бейрут, 1956; Б. Я. Ш и д ф а р. Абу-Ль-Аля Аль-Маарри. М., 1985.

ներդաշնակության մեջ, որը հղի է փոփոխման անհրաժեշտությամբ, իսկ հեղինակին ամենուր հետապնդում է «համաշխարհային չարիքը», ինչը և հանգում է եղած կարգերի (այն է՝ Ալլահի կերտած) աշխարհակառույցի խոր քննադատման.

*Եթե Տերը մարդկանց դատեր իրենց արարքներով,
Այնժամ չարագործը հատուցումից չէր խուսափի,
Իսկ որքա՞ն մարգարեներ ենք տեսել, որ փորձել են
Փրկել մարդկանց իրենց արատներից,
Եվ նրանք բոլորն անցան, իսկ մեր փորձանքները մնացին,
Եվ մեր տկար հոգին ապաքինված չէ մինչ օրս...*

Նման հայացքների համար ալ-Մահարրիի թշնամիները նրան կոչել էին հերետիկոս (զինդիկ): Բանաստեղծի խոհափիլիսոփայական երկերը առաջադեմ, լուսավոր մարդու բողոքն էր իր ժամանակի, տիրող կարգերի հանդեպ: Միաժամանակ նա կարծես իր երկերում փորձում է հեռանալ շուրջը տիրող քառասյին անբարոյությունից, ձգտում է միանձնության, ճգնափորի կյանքի, մեկուսացման: «Մահարրացի իմաստունը», իր բարձրացրած դրույթներով և աշխարհագրագոյությունով, X–XI դարերում շա՛տ առաջ անցավ իր ժամանակաշրջանից, Միջագետքից ելած նրա խոհերի լույսը դեռ բազում դարեր անհրաժեշտ եղավ մարդկանց: Ուստիև Բսահակյանն ապագա պոեմի հերոսին ընտրելիս չառաջնորդվեց ալ-Մահարրու սոսկ պոետիկ անվամբ կամ Հին Արևելքը խորհրդանշող բանաստեղծի ընդհանրական կերպարով: Մահարրացի կույր բանաստեղծը նրան հոգեհարազատ եղավ առաջին հերթին իր ստեղծագործության խոր փիլիսոփայական բովանդակությամբ, «Մեծ ժխտողի» ընդվզող խառնվածքով, երկերի ազատամիտ հնչեղությամբ և աշխարհն ընկալելու հազվագյուտ դրամատիկ կարողությամբ: Այնպես որ, նա ոչ միայն ձևական, արտաքին նմանության եզրերով էր կապվում իր ընտրած հերոսի կերպարի հետ, այլև ներքին հոգեհարազատությամբ: Եվ իրականում Աբու-լ-Ալա ալ-Մահարրիի և Ավետիք Բսահակյանի աղերսները շատ ավելի խորն են ու հարուստ: Եվ եթե վերջինս շատ բան այս կապակցությամբ չի արտահայտել իր այլ գրվածքներում, հողվածներում կամ նամակներում, ասել է պոեմով:

Նման մեծությունների մոտ, ինչպիսիք են ալ-Մահարրին ու Բսահակյանը, ոչ մի բան պատահական չի լինում: Արևելքը, իհարկե, շա՛տ վաղուց էր իր մեծ բանաստեղծներով՝ Հաֆիզ, Մաադի, Ֆիրդուսի, Խայամ, Ռուդաֆի, գրավել հայ բանաստեղծի սիրտը: Դեռ մանուկ հասակից լսել էր արևելյան երգեր ու լեզենդներ՝ ապրելով Գյումրիում՝ հին քարավանային ճամփաներից ոչ հեռու, ճամփաներ, որոնցով քարավանները գնում էին դեպի Արևելքի հեքիաթային երկրները, որոնք գրավել են պատանի Բսահակյանի հետաքրքրությունը և դյուրեղ նրա երևակայությունը ու մի անբեկանելի ուժով ձգել պոետին դեպի կախարդական աշխարհները: Հայ մարդն ընդհանրապես կապված է Արևելքի հետ, էլ ուր մնաց գերզգայուն փիլիսոփա բանաստեղծը: Այնպես որ, նրա տեսադաշտում Աբու-Լալայի նման լեզենդար կերպարի երևան գալն ունի իր ուրույն հիմքերը, որոնցից վճռականը դառնում է հենց պոետի կերպարը և նրա ստեղծագործությունը:

Բանաստեղծական ինտուիցիայով Բսահակյանն զգացել է «Մահարացի հաքի-մի» (Մահարացի իմաստունի) ինչ լինելը: Այո, նա, թերևս, իր ժամանակակիցներից բոլորից լավ է հասկացել Մեծ դերվիշի ոգին, հասկացել նաև, որ հենց Աբու-Լալան է իրեն հարկավոր որպես հոգու թարգման, և նա պիտի խոսեցներ Աբու-Լալային ոչ իբր արաբ բանաստեղծի, բազմաթիվ երկերի հեղինակի, ոչ նրա լեզվով, այլ որպես հայ բանաստեղծի մտքերի ու մտորումների յուրօրինակ արտահայտիչ, նա պիտի իր լեզվով խոսեցներ ալ-Մահարրիին, որով Աբու-լ-Ալա ալ-Մահարրին դարձավ Աբու-Լալա Մահարի գրական հերոս՝ XX դարի հայ բանաստեղծի գլուխգործոցային պոեմ:

Սակայն հարկ է նշել, որ Բսահակյանը, ինչպես նշել է գրականագետ և հասարակական գործիչ Կարեն Միքայելյանին ուղղված նամակում, իր պոեմի հերոսի հետ ազատ է վարվել, քանզի վերջինս ոչ թե արաբ բանաստեղծն էր, այլ ինքը՝ Ավետիք Բսահակյանը, որը հանդես էր գալիս Աբու-Լալա Մահարիի անվան տակ: Հիշյալ նամակը բացահայտում է Բսահակյանի վերաբերմունքը իր գրական հերոսի հանդեպ և տալիս է մեզ յուրովի բանալի՝ հասկանալու համար պոեմը. «1917, մարտի 18, Ժնև. Գրում ես, թե «Մահարին» չի համապատասխանում պատմական դեմքին. դա, սիրելիս, ես լավ գիտեմ, ինձ միայն անունն էր պետք, հնությունը, կոլորիտը և մասամբ էլ նրա պեսիմիստ-փիլիսոփա հոգին: Նրա գրածները կարդացել եմ և՛ գերմաներեն լեզվով, և՛ ֆրանսերեն, գիտեմ, որ նա կույր է եղել, Բաղդադ չի եղել, բայց այդ չէ կարևորը, այնտեղ ես եմ, ուրիշ ոչ ոք, միայն դա ուրիշի վերարկուի տակ»⁹:

Բսահակյանը երբևիցե ոչ մի տեղ չի մատնանշում, որ ինքը պոեմ է գրում միայն Աբու-լ-Ալա ալ-Մահարրիի մասին, և ընդհանրապես Բսահակյանի խառնվածքի քնարերգու բանաստեղծը, ինչքան էլ սիրեր ու հարգեր Հին Արևելքի որևէ իմաստունի և բանաստեղծի, նրա մասին առանձին պոեմ չէր գրի, քանզի նրա ասելիքը միշտ, առաջին հերթին, կապված է եղել իր անհատականության, իր մտածողության և իր հարազատ ժողովրդի ճակատագրի հետ: Անհատական ոլորտը Բսահակյան ստեղծագործողի մոտ միշտ էլ գերիշխող է եղել: Այս տեսակետից Հին Արևելքի մյուս մեծերն էլ՝ Սաադին, Լի-Թայի-Պոն, Օմար Խայամը, որոշակի չափով իր սեփական «ես»-ի, մարդկային խառնվածքի մարմնավորումներն են: Ինչպես ասել է Բսահակյանն ալ-Մահարրիի առնչությամբ՝ «...իմ հոգու զավակն է նա, խորթ չէ ինձ այդ դժբախտ հոռետեսությունը... և գտա իմ հոգիս նրա հոգու նման... Ընտրեցի նրան իմ հույզերս մարմնացնող... միայն էությունն եմ առել, իմ էությունը միևնույն ժամանակ» (1926)¹⁰, «Այդպես եմ և ես, որպես Աբու-Լալա Մահարի» (1928)¹¹, «...շատ հարազատ են իմ տրամադրություններին, հոգեկան հարազատություն կա» (1947)¹²:

⁹ Ա. Ա ղ ա մ յ ա ն. Ավ. Բսահակյանի նամակները Կարեն Միքայելյանին. – ՊԲՀ, 1973, № 2, էջ 235:

¹⁰ Ա վ. Բ ս ա հ ա կ յ ա ն. Երկերի ժողովածու 6 հատորով, հ. VI, Երևան, 1979, էջ 216-217:

¹¹ Ա վ. Բ ս ա հ ա կ յ ա ն. Հիշատակարան, Երևան, 1977, էջ 372:

¹² Ավ. Բսահակյանի նամակը Լ. Մելիքսեթ-Բեկին. տե ս Լ. Մ է լ ի ք ս է թ - Բ է կ. Ավետիք Բսահակյանը և վրաց գրականությունը. – ՀՄՄՀ ԳԱ «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1951, № 4, էջ 45:

Հիրավի, իր ոչ մի այլ հերոսի և իր կերպարի նույնացման, հոգեկան մտերմության մասին Բսահակյանն այնքան չի գրել, ինչքան «Աբու-Լալա Մահարի» պոեմի դեպքում: Բայց ճշմարտությունը պահանջում է ասել, որ ինչքան Բսահակյանի պոեմի հերոսը կապված է արաբ մեծ իմաստասերի կերպարի հետ, այնքան էլ կապված է և իր՝ XX դարի հայ բանաստեղծի կերպարին: Բնական է, որ Աբու-Լալան չէր կարող պարզապես Ավետիք Բսահակյան լինել, քանզի շատ մեծ են դարձրջանների, հավատքների, շրջապատի, մթնոլորտի, Արևելք – Արևմուտք հասկացությունների տարբերությունները: Բայց և միաժամանակ, հենց Բսահակյանի վկայությամբ, պոեմի հերոսը սուկ X դարի արաբ հանճարեղ բանաստեղծը չէր, այլ նաև հայ հեղինակի փիլիսոփայական սուբստանցիայի արտահայտիչը, նրա երևակայության և իդեալների մարմնավորումը:

Աբու-Լալա Մահարիի կերպարի մեջ երկփեղկված են և՛ Աբու-լ-Ալա ալ-Մահարրին, և՛ Ավետիք Բսահակյանը:

Եվ վերջապես, այս երկի թե՛ մեծ անունը, թե՛ լայն ճանաչումը պայմանավորված են այն հանգամանքով, որ «Աբու-Լալա Մահարի» պոեմը գեղարվեստական ստեղծագործություն է, բանաստեղծական արվեստի կատարյալ գործ: Ուրեմն նա ունի և իր երրորդ կյանքը, արվեստի, գեղարվեստի երկի կյանքը, որն աշխարհ գալով՝ ձեռք է բերում իր ճակատագիրը, անկախ այն բանից, թե ինչ աստիճան է կապված ալ-Մահարրիի կամ Բսահակյանի ճակատագրի հետ: Եվ այս երրորդ կյանքն է պայմանավորում, թե ինչպես է նա ընկալվում ժողովրդի, ընթերցողի կողմից, երբ փոխվում են պատմական ժամանակաշրջանները, ինչպես և հասարակական համակարգերը:

Ուրեմն այսպես, ինչպես գրել է Բսահակյանը. «Ընտրեցի նրան իմ հույզերիս մարմնացնող», այսինքն որպես իր նվիրական հերոս՝ Մահարրաթ ան-Նումանում 973 թվին ծնված արաբ բանաստեղծ Աբու-լ-Ալա ալ-Մահարրին: Ինչպես է տեղի ունեցել Բսահակյանի առաջին ծանոթությունը ալ-Մահարրիի ստեղծագործությանը. այդ մասին Բսահակյանը գրում է «Հայաստանի կոչնակ» շարաթաթերթի խմբագիր, գրականագետ Հովհաննես Ավագյանին, 1926 թ. հունվարի 31-ին Վենետիկից՝ Նյու Յորք, ուղղված նամակում. «Գալով «Աբու-Լալա Մահարի»-ին, սիրելի Հ. Ավագյան, իմ հոգու գավակն է նա, խորթ չէ ինձ այդ դժբախտ հոռետեսությունը: Արաբ նշանավոր բանաստեղծի գրությունների մի փոքր գիրք, գերմաներեն, ձեռքս անցավ, կարդացի և գտա իմ հոգիս նրա հոգու նման... և նրա ապրած միջավայրը համաձայն գտնելով իմ ռոմանտիկ խառնվածքին, – քարվան, անապատ, արևելք, խորհրդավորություն, – ընտրեցի նրան իմ հույզերս մարմնացնող: Արաբ բանաստեղծից միայն երկու տող եմ առել, և ուրիշ ո՛չ մի բառ, ո՛չ մի պատկեր, որ չլինի վերարտադրություն: Նույնիսկ նրա կյանքի հանգամանքները փոխել եմ. աղքատ է եղել նա, կույր, Բաղդադից դուրս չի եկել, միայն էությունն եմ առել, իմ էությունը միննույն ժամանակ»¹³:

¹³ Ա. փ. Բ ս ա հ ա կ յ ա ն. Երկերի ժողովածու, հ. VI, էջ 217:

Կարևոր հանգամանք է նաև պոեմի վերնագրի ընտրությունը, քանզի պոեմի դեպքում, ի տարբերություն, ասենք, բանաստեղծության, որը կարող է ընդհանրապես լինել անվերնագիր, վերնագիրը մեծ նշանակություն է ձեռք բերում: Բսահակյանը պոեմը վերնագրում է ուղղակի իր հերոսի անվամբ՝ «Աբու-Լալա Մահարի» կրճատված ձևն է սա արդյոք արաբ բանաստեղծի լրիվ անվան, թե հեղինակի անկանչին ավելի քաղցրալուր հնչող ազգանվան հայկականացված տարբերակը, դժվար է ասել: Վ. Բրյուսովն այն վերնագրել էր «Աբու Ալա Մահարի» (“Абул Ала Маары”): Այնուհետև առաջին և հետագա տպագրություններում վերնագրից հետո գրված էր «Քասիդ», իսկ Խորհրդային Հայաստանում տպագրված պոեմի օրինակներում քասիդ բառը հանված է: Մինչդեռ Բսահակյանը կարևոր նշանակություն է տալիս այդ բառին: Կ. Միքայելյանին հասցեագրած իր վերոհիշյալ նամակում, նա հեռակա կարգով բանավիճում է ռուս հայտնի արաբագետ, պրոֆ. Բզնատի Կրաչկովսկու (1887-1951) հետ. «Պրոֆեսորը սխալվում է «Քասիդա, քասիդ» նշանակության մասին, նա կնշանակե Պոեմ, այդպես են վկայում բառարանները, և կենդանի մարդիկ, արաբագետներ, ծանոթ եմ Բեռլին՝ նշանավոր պրոֆ. Մարտին Հարտմանին (նույնն է ասում), ծանոթ եմ արաբ սենատոր և գրող Էլ-Բոստանին, նույնն է ասում»¹⁴:

Այսինքն՝ Բսահակյանը վերնագրից հետո արաբերեն նշանակությամբ դրել է ենթախորագիր՝ քասիդ (պոեմ), ըստ երևույթին, ընդգծելու համար թե՛ երկի ժանրը, թե՛ կապը արաբական պոեզիայի հետ: Այնուհետև նա այս նույն նամակում գրում է պոեմի գլուխների վերաբերյալ օգտագործած տերմինի՝ «սուրահ» բառի մասին, որի ուղղակի հայերեն թարգմանությունը նշանակում է հատված, մաս կամ գլուխ: Այս հանգամանքն էլ առաջ է բերել արաբագետ, պրոֆ. Բ. Կրաչկովսկու անհամաձայնությունը, որը գրել է, թե արաբների մոտ սուրա-ն հատուկ նշանակություն ունեցող բառ է, քանզի «Կորանի» մեջ տարբեր մասերը բաժանված են սուրաների: Բսահակյանը գրում է. «...»Սուրա»-ի մասին ճիշտ է, նա գործածվում է Ղուրանի մեջ, և մեր «սրահ» բառն է, «սրահ» կնշանակե հերթ, կարգ, բայց ես ուզեցել եմ նոր Ղուրան գրել («մանիա գրանդիոզա» մեծամտություն): Չէ՞ որ ասել եմ. «Օ՛, ազատություն, դու դրախտային վառ բլրուկների Այ Կորան»։ Վրաս չծիծաղես»¹⁵:

Հայ բանաստեղծը որպես գեղարվեստական հնարք (և դա շատ տեղին է) պոեմը գլուխների բաժանելիս օգտագործել է մաս կամ գլուխ բառերին հոմանիշ սուրահ բառը՝ մեկ անգամ ևս ընդգծելով երկի կապվածությունը Արևելքի հետ, արևելյան ավանդության հետ: Պոեմը բաժանված է 7 սուրահների, այն եզրափակում է «Վերջին սուրահը»: Իսկ պոեմը սկսում է անվերնագիր նախերգանքով.

Աբու-Լալա Մահարին,
Հոշակավոր բանաստեղծը Բաղդադի...¹⁶

¹⁴ Ա. Ա. Պ. Մ. Վ. Ս. Ավ. Բսահակյանի նամակները Կարեն Միքայելյանին, էջ 233:

¹⁵ Նույն տեղում, էջ 234:

¹⁶ Ա. Վ. Բ. ս. ա. կ. յ. ն. Երկերի ժողովածու չորս հատորով, հ. II, Երևան, 1950, էջ 59: «Աբու-Լալա Մահարի» պոեմի բոլոր մեջբերումներն արված են այս հրատարակությունից:

Պոեմի ընդհանուր պատումի և նախերգանքի վերաբերյալ հետաքրքիր տեղեկություններ է թողել Իսահակյանը «Վահան Տերյան» հուշերում: Ընդհանրապես, հարկ է ասել, որ Իսահակյանն իր գլուխգործոց պոեմի մտահղացման, ստեղծման պատմության մասին շատ քիչ է գրել: Եվ եղածը ձեռք է բերում աղբյուրագիտական մեծ արժեք: Խոսքը տանք Իսահակյանին. «1909 թվին, ամառը Ախալքալաք գնալիս Վահանը կանգ առավ Ալեքսյուլում, մի քանի օր ինձ մոտ հյուր մնալով՝ կարդաց իր նոր գրած «Ոսկի հեքիաթ» ցիկլից: Ես էլ գրել էի «Աբու-Լալա Մահարին», ցույց տվի նրան, հավանեց և մի քանի նկատողություններ արավ: Նրա խորհրդով նախերգանքի մեջ, – Մահարու հակիրճ կենսագրականում, – փոփոխություն մտցրի, որ մինչև այսօր էլ չգիտեմ լավ արեցի, թե վատ:

Ավելորդ չեմ համարում մեջ բերել այդ: Գրել էի այսպես.

«...Եվ մի գիշեր, երբ շատ լքված էր նա և սրտաբեկ, դուրս հանեց երևակայության միջից քաջագնաց ուղտերի մի քարավան՝ ընտիր սարքով, և մինչ Բաղդադը քուն էր մտել Տիգրիսի նոճիածածկ ավերի վրա – գաղտնի հեռացավ քաղաքից»:

Վահանը գտավ, որ սա շատ անիրական կթվա, շատ անհամոզիչ: Եվ, ուրեմն, իբրև թե ավելի համոզիչ կլինի, եթե Մահարին իրական քարավան ունենա: Այդ նկատողությունն այն ժամանակ խելքիս նստեց և փոխելով՝ նախերգանքին տվի այն ձևը, ինչ որ այնուհետև հայտնի է հասարակայնությանը»¹⁷:

Ընթերցողը, անշուշտ, հիշում է, որ պոեմում Աբու-Լալան հեռանում է Բաղդադից ոչ թե երևակայորեն, այլ՝ իրականում.

Եվ որովհետև չունեք կին և երեխաներ,
Բոլոր իր հարստությունը բաժանեց աղքատներին,
Առավ իր ուղտերի փոքրիկ քարավանը՝ պաշարով ու պարենով,
Եվ մի գիշեր, երբ Բաղդադը քուն էր մտել
Տիգրիսի նոճիածածկ ավերի վրա, –
Գաղտնի հեռացավ քաղաքից...

Վ. Տերյանի մասին իր հուշը Իսահակյանը գրել է 1938 թ. Երևանում: Մակայն նախքան այդ, Իսահակյանը 1920-ական թվականների սկզբներին արել է հետևյալ գրառումը. «Ծանոթություն – Առաջին անգամ ես գրած էի այս ձևով. այսինքն՝ Աբու-Լալա Մահարին գնում է երևակայական քարավանով, տեսիլքի մեջ, սակայն երբ ընկերներին մոտ կարդացի ձեռագիրս, նրանք խորհուրդ տվին երազական քարավանը վերածել իրականի: Բայց հիմա լավագույնն եմ համարում վերադառնալու իմ առաջին սեփական մտածումին, ներշնչումին»¹⁸:

Իսահակյանը, ըստ երևույթին, մտածում էր, որ եթե իր հերոսը Բաղդադից դուրս գար իրական քարավանով, ապա նա ստեղծած կլիներ մի իրավիճակ, որ իրականում չի եղել: Հայտնի է, որ երբ ալ-Մահարին 36 տարեկան հասակում՝ դժգոհ Հա-

¹⁷ Ա. Վ. Ի ս ա հ ա կ յ ա ն. Երկերի ժողովածու 6 հատորով, հ. V, Երևան, 1977, էջ 118–119:

¹⁸ Ա. Վ. Ի ս ա հ ա կ յ ա ն. Աֆորիզմներ, կազմող Ավիկ Իսահակյան, Երևան, 2001, էջ 225:

լեպի էմիրների անընդհատ իրարամեջ կռիվներից, որոշում է բնակություն հաստատել Բաղդադում, սակայն այն ստորացուցիչ պատահարից հետո, երբ Բաղդադի հայտնի ալիքներից (ազնվականներից) մեկի աթ-Թահիդի որդին՝ բանաստեղծ ալ-Մուրթադան իր տնից բառիս բուն իմաստով դուրս գցել է տալիս ալ-Մահարրիին, հպարտ բանաստեղծը հիասթափված ու զայրացած հեռանում է Բաղդադից, բայց ոչ թե դեպի անապատ, այլ իր ծննդավայր՝ Մահարրա քաղաքը և ուր ապրում է մինչև խոր ծերություն՝ 84 տարի: Եվ եթե Բսահակյանը պոեմում իր հերոսին երևակայական քարավանով տաներ դեպի Արաբիայի ավազուտները, դա գուցե ավելի նման լիներ ալ-Մահարրիի կյանքի ճշմարտությանը:

Եվ ինչպես երևում է Տերյանի մասին հուշերից և «Աֆորիզմներ» գրքից բերված հատվածից, Բսահակյանը երկար խորհել է, թե ո՞ր տարբերակը ավելի տեղին կլիներ. եթե գրում էր ալ-Մահարրիի կյանքի մասին՝ հավանաբար երևակայական քարավանը, իսկ եթե գեղարվեստական, ինքնավար պատմությունն ունեցող պոեմ էր գրում, ապա ավելի ընդունելի էր երկրորդը՝ իրական քարավանը: Ի վերջո, տեքստում քարավանն իրական էր և ոչ երազային:

«Գեղարվեստ» ամսագրում տպագրվելուց հետո (1909, -3), պոեմի հենց առաջին գնահատականը եղավ չափազանց դրական, բանաստեղծը որոշեց արվածին այլևս ձեռք չտալ, սակայն, ինչպես երևում է նրա գրառումներից, նա այդ մասին մինչև վերջ խորհել է...

Պոեմի նախերգանքը թեև շատ հակիրճ է, բայց այնտեղ զարմանալի խտությամբ գծագրվում է բանաստեղծի մեծ կյանքի սեղմ ճամփան, այնպես ցայտուն ու ամփոփիչ, որ կարծես մի ողջ գիրք կարդացած լինես «մահարրացի իմաստունի» մասին: Եվ հենց իր ստղաչափական ձևով, ասելիքի մատուցման եղանակով նախերգանքը նախապատրաստում է ապագա երկի գեղարվեստական աստղձր, բացում քարավանի առաջ Արաբիայի անապատի դռները:

Թեև Բսահակյանն իրական քարավանով է տանում իր հերոսին Արաբիայի ավազուտներով, սակայն մենք հասկանում ենք, որ այս ճամփորդությունը ոչ թե իրական է, այլ պոետի երևակայության մեջ ընթացող քարավան է, որի հիմնական կայանները պոեմի սուրահներն են: «Քարավանը» Բսահակյանի մտքի թելն է, նրա գրուցակիցը ու ընդդիմախոսը, նրան է անընդհատ ուղղում իր խոսքը, իր բողոքն ու զանգատը, իր մերժումն ու ժխտումը:

Եվ այսպես Բսահակյանը Աբու-Լալայի քարավանը դուրս տարավ Բաղդադից: Արաբ բանաստեղծի դատողությունների համահավաքը պատկերող պոեմը բաղկացած է յոթ և գումարած մեկ (վերջին) սուրահից: Մենք կարող ենք այդ սուրահներն անվանել սրահ, մաս, կայան: Եվ քանի որ ուղևորությունը, թեև ըստ պոետի իրական է, սակայն այն ընթանում է հայ բանաստեղծի մտքի, երևակայության միջով: Եվ այդ ճամփին որևէ ստույգ կայան չկա, որևէ այլ անձի հետ հանդիպում չկա. ուղտերի քարավանից ու ինքն իրենից բացի Աբու-Լալան ուրիշ գրուցակից չունի: Դանթեն նույնպես իր գորեղ պոեմում երազային, երևակայական ճամփորդության է դուրս գալիս, սակայն նա այնտեղ պատահում է իր ուղեկցին՝ Վերգիլոսին, և իրական բազում այլ անձերի հոգիների, որոնք երկրային կյանքում գործել են այս

կամ այն մեղքն ու դժոխքում հատուցում են գործած հանցանքները և կամ դեզերում են քավարանի ճամփեքին՝ սպասելով վերին վճռին: Նրա ողջ պոեմը հագեցած է իրական պատմական դեմքերով: Դանթեի կողքին և Վերգիլիոսն է, և հաջորդաբար «գործող» այլ անձինք: Մինչդեռ Աբու-Լալան բացարձակապես մենակ էր և ոչ մի իրական անձի չպիտի պատահեր իր ճանապարհին: Ինքն էր, իր մտքերը, իր ենթաշխարհը, ողբերգական եզրահանգումների հասնող նրա տառապագին մեկնաբանությունները: Տվյալ դեպքում աշխարհը պարփակված էր նրա ուղեղում և վերլուծական սուրա-սրահներով պիտի անցներ Աբու-Լալայի մտքի քարավանը: Եվ մտային այդ ճամփի կայաններում (ավելի ճիշտ՝ ուղեղի ոլորաններում) հերթականություններ, մեկը մյուսի ետևից Բսահալյանի հերոսը պիտի ձաղկեր ու մերկացներ, քններ ու նզովեր մարդուն, համայնքը, երկիրը, պետությունը, հայրենիքը՝ իր հագար ու մի բաղադրյալներով հանդերձ:

Եվ եթե զուգահեռներ տանենք այս երկի և Նարեկացու «Մատյան ողբերգության» միջև, կնկատենք, որ Նարեկացու հերոսն իր սրտի խոսքն ուղղում է առ Աստված, և նրա մենախոսություններն առաջին հերթին սեփական մեղքերի քավության, ինքնախարագանման և ինքնապախարակման մի գորեղ շարան են:

...Բջած բարձրագույն իմաստությունից՝
Դառնում եմ ես այն, ինչ որ ինքս կամ:
Դրսից առնում եմ հրեշտակի տեսք, ներքուստ՝ դիվանում:
Ոտքով հաստատվում, բայց տատանվում եմ շարունակ մտքով:
Սուտ ձևանում եմ, իրոք խոտորվում:
Կեղծում եմ արդար, սակայն գործում եմ ամբարշտություն...
...Պճնագարդվում եմ մարմնով արտաքուստ,
Բայց իրականում ճայի գույն ունեմ:
Մոտենում եմ, որ դաշինք հաստատեմ,
Բայց ուխտակորույս վռնդվում եմ դուրս:
Այսօր մի մաքուր հոգեկիր եմ ես, վաղը՝ խելագար,
Թողած տերունի պատվիրանները՝
Հետևում եմ միշտ օձի սաղրանքին...
...Արևածագին հարուստ եմ թվում,
Բսկ մայրամուտին դեզերում եմ ու հաճում ձեռնունայն:
(«Մատյան ողբերգության», ՀԱ, ր)¹⁹:

Նարեկացու հերոսը ինքն իրեն է բացահայտում, մերկացնում ու դատափետում, և ողջ աշխարհի մեղքերն իր վրա վերցրած՝ քավություն է աղերսում:

Այն, որ այդպես ցասումով Նարեկացին ասում է ինքն իր մասին, Բսահալյանն ասում է ողջ մարդկության հասցեին: Նարեկացու մոտ ինքնամերկացում է, Բսահալյանի մոտ մերկացվում է մարդկությունը, համայնքը, իշխանությունը, ոչինչ չի բացառվում կամ անտեսվում: Այն, որ Նարեկացին դուրս իսկ չի խղճում իրեն, ասում է խոսքեր, որ հիրավի ոչ մի մահկանացու չէր ասի իր մասին, և անզիջողական

¹⁹ Այս և հետագա մեջբերումները Նարեկացու երկից արված են հետևյալ հրատարակությունից. Գ ր ի գ ո ր Ն ա ր ե կ ա ց ի. Մատյան ողբերգության, թարգմանությունը Վազգեն Գևորգյանի, Երևան, 1979:

է գերագույն աստիճանի՝ ինքնաժխտման եզակի օրինակ է համաշխարհային պոեզիայում:

Այնինչ Բսահակյանի գրչի տակ քննադատման, դատափետումի հասցեատերը համայն մարդկությունն է, և հեղինակը չի խնայում ոչ մի հասարակական օղակ, կառույց կամ անհատ: Նարեկացիական ինքնահրկիզումը Բսահակյանի մոտ վերածվում է մարդ արարածի խարանման, վերածվում է հասարակության և համայնքի համապարփակ ձաղկման:

Եվ ժխտման ու դատափետման առաջին սուբյեկտը, որ հայտնվում է արար բանաստեղծի հանճարեղ մտքի կեռամաններում՝ պոեմի առաջին սուրահում՝ մարդն է, մարդկային հոգին:

Ատում եմ, ինչ որ սիրել եմ առաջ, ինչ որ տեսել եմ մարդկային հոգում.

Մարդկային հոգում՝ զագիր ու նանիր՝ համրել եմ հազար գարշանք ու նողկում:

Բայց ամենից շատ ատում եմ հազար ու մեկերորդը - կեղծիքը հոգու,

Որ զարդարում է անմեղ սրբերի լուսապսակով երեսը մարդու...

և մարդկային լեզուն՝

Մարդկային լեզու, դու որ երկնային բույրով ու թույրով, շղարշով պայծառ

Ծածկում ես մարդու դժոխքը հոգու, ոգե՞լ ես արդյոք ճշմարիտ մի բառ:

Եվ հեռանում է անվերադարձ, փախչում մարդուց ու ընկերից Աբու-Մահարին, անվերջանալիորեն զգված ու հիասթափված մարդ արարածից:

Այնքան ժամանակ, որքան արևը կայրե Մինայի սնարները վես

Եվ անապատի դեղին շեղջերը հորձանքներ կտան ալիքների պես, -

Ես չեմ կամենա ողջունել մարդկանց, նրանց սեղանից պատատ չեմ կտրի,

Գազանների մոտ հացի կնստեմ, ողջույնը կառնեմ բորենիների:

Առաջին սուրահում մի պահ, ընդամենը մի դրվագ է բնորոշում Բսահակյանը Աբու-Լալայի մարդկային խառնվածքից, որը, սակայն, վկայում է նրա անչափ բարությունը:

Եվ վերջին անգամ Աբու Մահարին ետ դարձավ նայեց նիրհած Բաղդադին,

Գարշանքով շրջեց ճակատը կնճռոտ և փարվեց ուղտի թավ պարանոցին:

Միրով գուրգուրեց, ջերմ շրթունքներով համբուրեց ուղտի աչքերը վճիտ.

Եվ թարթիչներից նրա կախվեցին անգուսպ արցունքի երկու այրող շիթ:

Այս «երկու այրող շիթ»-ը բանաստեղծի մարդասեր հոգու լավագույն ապացույցն էն, և միաժամանակ նրա տառապագին ափսոսանքը մարդու հոգեկան անկման

համար: Պոեմի սուրահներում, այս կամ այն կերպ, այս «երկու այրող շիթը» զանազան ձևափոխումներով դեռևս երևան կգան:

Հաջորդ՝ Երկրորդ սուրահում Աբու-Լալան հաշվեհարդար կտեսնի կին, սեր, երջանկություն հասկացությունների հետ: Քնարական բանաստեղծի երկերում սեփական ճակատագիրը, կյանքի պատմությունը միշտ գերիշխող դեր է խաղացել, մանավանդ այնպիսի մի բնագավառում, ինչպիսին սերն է: Պոետը չէր մոռացել իր առաջին սիրո՝ Շուշանիկ Մատակյանի հետ կապված տխուր պատմությունը: Տասնվեցամյա Իսահակյանը սիրո իր գարունքին երազել է առավել, քան կարելի էր պատկերացնել իր իդեալին՝ ի դեմս ալեքսանդրապոլյան գեղեցկուհի Շուշանիկ Մատակյանի: Հենց այդ անբեկանելի զգացումներն է մտաբերել պոետը սիրո մասին գրելիս.

*Դու երազել ես աստղը հեռավոր, հրեշտակաթև շուշանն ըսպիտակ,
Որ քո վերքերին բալասան լինի, ոսկեշող երազ կյանքի ցավի տակ,*

*Դու տենչացել ես լույս-ափերի մեջ քեզ իրեն կանչող աղբյուրի երգին,
Եվ անմահության ցողն ես երազել և անուշ լացել երկնային կրծքին...*

Շուշիկի ուխտադրուժ մերժումից հետո բանաստեղծի հոգում մեկ և ընդմիշտ վիթխարի ճաք է առաջանում, տեղի է ունենում մի չսպիացող հուսախաբություն ընդհանրապես կինարմատի հանդեպ: Եվ այդպես էլ առաջին սիրո ուխտադրության ճեղքվածքը չանցավ, և կինը մշտապես կորցրեց իր հավատը Իսահակյանի հոգում:

Այնպես որ, պոեմի այն տողերը, որ Իսահակյանն ուղղել է կին էակին, ունեն իրենց իրական կենսական պատմությունը և, առաջին հերթին, կապված են հենց իր սիրո պատմության հետ: Թեև 16 տարի էր անցել, Իսահակյանը չի փոխում իր կարծիքը, ասենք նաև, որ հետագայում էլ այն չի փոխում և՛ «Լիլիթը» գրելիս, և՛ «Ուստա Կարո» վեպում, և՛ իր «Աֆորիզմներում»: Մեզ թվում է, թե այս հանգամանքը ինքնին շատ բան է ասում: Բայց սա է Իսահակյանի տեսակետը...

Իր պոեմում Իսահակյանը հավատարիմ է մնում մեծն Նարեկացու գաղափարներին: Իսահակյանը գրում է տողեր, որոնք կարելի է համեմատել միայն «Մատյան ողբերգության» մեջ տեղ գտած կնոջն ուղղված գնահատականի հետ.

*Ո՞ր է Փագովրի մահաբեր արձանն այլանդակատես,
Ո՞ր՝ սիդոնացոց տգեղ անպարկեշտ
Էզի ձուլածոն ամենանզով,
Ո՞ր է կանացի կերպով զագրատես
Խայտառակությունն այդ անգրելի,
Որին անձնատուր՝ պիղծ պաշտամունքի
Մարգարեները անաստվածաբար
Եվ անասնական մոլագարությանը,
Բոլորն անխտիր, տոն էին անում՝
Հանուն չարության անժուժկալ դևի:*

Կինը, որ որսաց դեռ նախահորն ու մատնեց կորստյան,
Տարավ և սրա բարեբաստության երաշխիքը ողջ.
Փառամոլությունն հաղթեց գերապանծ իր իմաստության,
Գոռոզությունը գերեց լիովին,
Հեշտասիրությունն հիմարացրեց,
Բշխեց արծաթը ստրկացնող,
Կործանարարի զենքը վաղեմի
Հոգով սպանեց տոնելի մարդուն
Եվ նրան Աստծո գրկից հանելով՝
Ստամբակի պիղծ ոտքի տակ նետեց,
Մեղկությունը ցոփ մեռցրեց նրան,
Պղերգությունը ընդարմացրեց,
Շվայտությունը արբեցրեց իսպառ:
Ո՛վ դյուրապատիր մարմին երկրածին,
Ի՛նչ ողբ ու կոծով ավաղեմ ես քեզ.
Քանզի հատուկ է հակասությունն այս
Ոչ միայն նրան, այլև շատերին,
Որոնք սխալվում և խոտորվում են ինքնակամորեն:
(Բան ԽԼ, գ մաս)

Երկրորդ սուրահում՝ սիրո վերաբերյալ իր մտորումներում, Իսահակյանը բացարձակապես անզիջողական է: Եվ սա չի գրում կնաստյաց մի հեղինակ կամ սիրուց խուսափող մի այր, սա գրում է մեկը, որ ժամանակին տենչացել է.

Դու երագել ես աստղը հեռավոր, հրեշտակաթև շուշանն ըսպիտակ
Որ քո վերքերին բալասան լինի:

Եվ ի՞նչ է փոխարենը պոետը ստացել: Ինչպես Շեքսպիրն է պատկերավոր ասել «Օթելլոյում», «Այս րոպեիս ձեր աղջիկը և մավրը մի երկումեջքանի անասուն են կազմել»:

Իսահակյանը երբեք չէր հաշտվելու կատարվածի հետ, և կինն էլ երբեք չէր գտնելու իր արդարացումը նրա գրչի տակ: Եվ իր զգացածը՝ ժամանակին իր տառապած հոգին դադած հուրը, հազարապատիկ անգամ թեժացնելով, պիտի ուղղեր կինարմատին.

Եվ կինն ի՞նչ է որ... խորամանկ, խաբող, առնախանձ մի սարդ, հավերժ նանրամիտ,
Որ հացդ է սիրում, համբույրի մեջ սուտ և քո գրկի մեջ գրկում ուրիշին:

Խարխուլ մակույկով հանձնվի՛ր ծովին, քան թե հավատա կնոջ երդումին...

Նա՛՝ կավատ, վարար, մի չքնաղ դժոխք, նրա բերանով Բրլիսն է խոսում:

Նույնպես անողոր է նա և սեր հասկացության հանդեպ, քանզի սերը այն զենքն է, որով կինը ստրկացնում է տղամարդուն:

Եվ պոեմի Երկրորդ սուրահի այս հատվածում է միայն Իսահակյանը մեջբերում անում արաբ բանաստեղծից.

*Մրիկա է նա, ով հայր է լինում, ով երանավետ ծոցից ոչնչի՝
Գոյության կոչում թշվառ հյուլեին և գլխին վառում գեհենն այս կյանքի:*

*«Բմ հայրը իմ դեմ մեղանչեց, սակայն՝ չմեղանչեցի ես ոչ ոքի դեմ»,
Այս իմ կտակը թող գրվի շիրմիս, եթե լուսնի տակ մի խորշ պիտ գտնես²⁰:*

Թեև Բսահակյանը աններող եղավ կանանց հանդեպ և ոչ գթասիրտ, սակայն նրա հոգու հեռավոր մի անկյունում միտում էր չկայացած սիրո վերքը, և ցավը կորցրածի հանդեպ: Եվ այս հոգեվիճակը իրեն նրբորեն զգացնել է տալիս «Աբու-Լալա Մահարի» պոեմի Երկրորդ սուրահի եզրափակիչ մասում.

*Եվ քարավանը մեղմիկ կարկաչով չափում էր ուղին ոլոր ու մոլոր,
Դեպի երազուն և կապույտ հեռուն հոսում էր առաջ հանգիստ ու անորոր:*

*Զանգակներն, ասես, հեկեկում էին և ծորում հատ-հատ հնչուն արցունքներ,
Քարավանն, ասես, լալիս էր անուշ, ինչ որ Մահարին սիրել, լքել էր:*

*Եվ գեփյուղների սրինգները մեղմ գեղգեղում էին շարքիներն անուշ
Սիրո վերքերի, վշտոտ կարոտի և երազական թախծանքի քնքուշ:*

*...Շյուսվելով անծիր ճանապարհի հետ՝ լուռ թախծում էր նա ցերեկ ու գիշեր,
Հայացքը հառած անհայտ աստղերին, հոգու մեջ դառն ու ցավոտ հուշեր:*

*Եվ ետ չէր նայում անցած ճամփեքին, և չէր արտասու թողած-լքածին,
Ողջույն չէր վերցնում, ողջույն չէր տալիս անցնող ու դարձող քարավաններին:*

Բերվածը հիրավի վկայությունն է Աբու-Լալայի վերապրած կարոտի և անմար հուշերի, Բայց այս ամենը նա պիտի մոռացության տար, քանզի ինքը հասկացել էր, որ ոչինչ չպիտի կարողանար փոխել ո՛չ կնոջ բնության, և ո՛չ էլ սիրո չգրված օրենքների ոլորտում: Բայց և այնպես, նրա մարդկային հոգին ցավում էր, և սիրտը չէր ձերբազատվում հուշերից:

«Աբու-Լալա Մահարին» ստեղծվեց Բսահակյանի համար շատ ծանր մի շրջանում: Բանաստեղծը բանտից բաց էր թողնված խոշոր դրամական երաշխիքի ներքո, սակայն հայ մշակույթի 160 գործիչների հանդեպ «Դաշնակցության գործ» դատական գործընթացը շարունակվում էր, և Բսահակյանը պարբերաբար կանչվում էր կա՛մ Թիֆլիսի ոստիկանության բաժին, կա՛մ Նովոչերկասկ քաղաքի շրջանային կայսերական դատախազություն, ուր քննվում էր գործը, և հեռու չէր օրը, որ պետք է սկսվեր դատավարությունը: Եվ ազատությունը պայմանական հասկացություն էր.

²⁰ Արար մեծ բանաստեղծը թաղված է իր ծննդավայր Մահարրա քաղաքում՝ իր ապրած տան բակում: Նրա շիրմաքարին գրված խոսքերն են, որ իր պոեմում մեջբերում է Բսահակյանը: Բարեբախտություն եմ ունեցել 1995 թ. հոկտեմբերին գտնվել Աբու-Լալայի հայրենիքում և այցելել նրա շիրմին:

նրա ամեն մի օրը ոստիկանական դիտակի տակ էր. այդ են վկայում Բսահակյանի «դատական գործի» տասնյակ վկայագրերը, գաղտնի գործակալների զեկուցագրերը, որոնք պահվում են Վրաստանի պետական պատմական արխիվում²¹:

Բանաստեղծի հոգեկան աշխարհը ծայրաստիճան հուզախոռով էր: Նա լավ գիտեր, որ ինքը ոչ թե մեկ կամ երկու տարով էր դատապարտվելու, այլ առնվազն 10 տարվա սիբիրյան աքսոր էր իրեն սպառնում, ինչպես ասել էր Ալեքսանդր Կերենսկին (այդ տարիներին Թիֆլիսում կայսերական գլխավոր դատապաշտպանը): Եվ նրա հոգում հասունանում էր Կովկասը, հայրենիքը, հայրենի տունը լքելու որոշումը, և Բսահակյանի քարավանը արդեն ինչ-որ չափով պատրաստվում էր ճամփա ելնելու: Եվ եթե երեք տարի առաջ (1906 թ.) գրված «Իմ կարավանը» պոեմում երիտասարդ Բսահակյանը իր քարավանն ուղղեց դեպի հայոց փառքի մայրաքաղաք Անին՝ կյանքի հարվածներին դիմադրելու համար հոգեկան ուժեր ստանալու նպատակով, ապա այս նոր քարավանը դեռ հայտնի չէր, թե ուր պիտի տաներ բանաստեղծին, բայց նրա միտքն ու տրամադրությունը համակված էին հեռանալու գաղափարով:

Ահա և իր հոգեաշխարհում տարիներ շարունակ կուտակված ցասումը, բողոքը այն հասարակարգի ու քաղաքական կառույցի հանդեպ, որի դեմ ինքը հանդգնեց ընդվզել, գլուխ բարձրացնել և իր գործունեությամբ հակադրվել, հազարապատիկ անգամ խտացված իր պոռթկումը գտավ «Աբու-Լալա Մահարի» պոեմում: Այս տեսակետից, պոեմի ամենահեղափոխական և միաժամանակ ամենափիլիսոփայական սուրահը պիտի համարել Երրորդ սուրահը:

Սա այն դեպքն է, երբ պոետական խոսքը և հասարակարգի դեմ ծառս ելած քաղաքական գործչի ընդվզումն ունեն նույն ուղղությունը: Անշուշտ, այս հանգամանքը ավելի նպատակաուղղված ու դիպուկ է դարձնում ասելիքը: Ակնհայտ է, որ Բսահակյանի ընդվզումը, ցասումը, բողոքը ունեն ոչ միայն անհատական մոտիվներ, այլև բաղադրիչ մասն են նրա համապարփակ, անկոտրում քննադատության մարդու և նրա սահմանած օրենքների հանդեպ.

*Աշխարհն էլ, ասես, մի հեքիաթ լինի՝
անսկիզբ, անվերջ, հրաշք դյուրական:*

*Եվ ո՞վ է հյուսել հեքիաթն այս վսեմ, հյուսել աստղերով, բյուր հրաշքներով:
Եվ ո՞վ է պատմում բյուր-բյուր ձևերով՝
անդուլ ու անխոնջ՝ այսպես թուլյանքով:*

Ազգեր են եկել, ազգեր գնացել, և չեն ըմբռնել իմաստը նրբա.

Բանաստեղծներն են հասկացել դույզն ինչ և թողնում են հնչյուններն անմահ:

Եվ հենց Երրորդ սուրահում է Բսահակյանն Աբու-Լալայի անունից տալիս իր դատավճիռը մարդուն և նրա ստեղծած օրենքներին: Այս մենախոսության մեջ նա խոր ցավով է արձանագրում, որ մարդ արարածն իր էության մթին և ընչաքաղց կողմերին հազուրդ տալու համար ապականեց ու նենգափոխեց այն հրաշք հնարավորությունները, որ Արարիչը պարզել էր նրա առաջ, և միայն բանաստեղծներն

²¹ Центральный государственный исторический архив Республики Грузия, ф. 94, оп. I, д. № 363.

են ի գորու ըմբռնելու «կյանքի հեքիաթը»: Մինչդեռ ամեն ինչ կարող էր այլ հունով ընթանալ, եթե մարդն իր մեջ չսպաներ մարդուն:

Կույր ու գուլ մարդի՛կ, առանց երազի, առանց լսելու հեքիաթն այս վսեմ,
Իրար կոկորդից պատառ եք հանում և դարձնում աշխարհն՝ ահավոր ջեհնեմ:

Ձեր օրենքները – լուծ ու խարազան, և անելք մի ցանց խոլական սարդի,
Եվ որոնց ժահրով թունավորում եք երգը բլբուլի, անուրջը վարդի:

Եղկելի՛ մարդիկ, փռչի կրդառնան ձեր վատ սրտերը, ձեր գործերը չար,
Եվ ժամանակի ձեռքը անտարբեր կըսրբե-կավլե պիղծ հետքերը ձեր:

Եվ ունայնաշունչ հողմը կըշաչե ձեր ոսկորների քարերի վրրա,
Իսկ վայելելու դուք միշտ ապիկար՝ երագն այս ջքնաղ, հեքիաթն այս ոսկյա:

Աբու-Լալայի այս մենախոսությունը եզակի է հեղինակի անհատականությունը հասկանալու տեսակետից: Այստեղ է առավել ցայտուն բացահայտվում պոեմի հերոսի մարդկային էությունը, այստեղ Իսահակյանն առավել անկեղծ է, քան որևէ այլ սուրահում:

Իմ մեջ այրվում է մի անհազ կարոտ, կարեկից մի սիրտ՝ լացող հավիտյան.
Եվ իմ հոգում կա մի ջքնաղ երագ, և՛ սուրբ արտասուք, և՛ սեր անսահման:

Ոգիս ազատ է, էս չեմ հանդուրժում իմ վրա իշխող ո՛չ մի գորության,
Ո՛չ օրենք, սահման, ո՛չ ճակատագիր, ո՛չ չար ու բարի, և ո՛չ դատաստան:

Իմ գլխի վերև չպետք է լինի ո՛չ մի հովանի, ո՛չ մի իրավունք,
Եվ իմ կամքից դուրս ամեն ինչ բանտ է, և՛ ստրկացում, և՛ բռնադատում:

Ես կուզեմ լինել անսահման ազատ, անպարտք, անիշխան, այլև անաստված,
Հոգիս տենչում է միայն, միմիայն՝ մեծ ազատության՝ անհուն, անտարած:

Այսպես կարող էր արտահայտվել միայն այն անհատը, ով հոգու ազատությունը, ինքնիշխանությունը իր կյանքի օրինակով ավելի բարձր է դասել, քան իշխանական դիրքն ու նյութական բարեկեցությունը: Նա, ով ոչ թե խոսքով, այլ գործով է ապացուցել իր հավատարմությունը անսահման ազատությանը: Այդպիսի անհատ էր և՛ պոեմի հերոսը, և՛ պոեմի հեղինակը: Պատահական չէ Աբու-Լալայի մեծ համբավը՝ որպես կրոնական դոգմաների բարեփոխիչ, անհնազանդ դերվիշի, և իր հերթին, Իսահակյանի անունը՝ որպես մեծն ընդվզողի, Գերմարդու երգչի: Եվ անկախ այն բանից՝ կարդացել էր նա Նիցշե, թե չէր կարդացել՝ Ջրադաշտի (Ջրատուուստրայի) քարոզները ինքնըստինքյան խոսում էին, դողանջում էին նրա հոգում: Նա իր էությունը էր նիցշեական: Կրկնում եմ՝ անգամ եթե կարդացած չլիներ «Այսպես խոսեց Ջրադաշտը»:

«Աբու-Լալա Մահարի» պոեմով Բսահակյանը գրում էր իր «Զրադաշտը». հիշենք՝ ինչ էր ասում նա իր նամակում Կ. Միքայելյանին. «Բայց ես ուզեցել եմ նոր Ղուրան գրել («մանիա գրանդիոզա» մեծամտություն)»: Այս խոսքերը շատ էական են հասկանալու համար պոեմը: Քանզի Բսահակյանը ոչ միայն գեղարվեստական ստեղծագործություն էր գրում, այլև իրապես փիլիսոփայական մի երկ: Եվ խոհականն այստեղ այնքան բնական է տարրալուծված գեղարվեստական կառույցի մեջ, որ անհնար է մեկը մյուսից առանձնացնել կամ առավելություն տալ դրանցից որևէ մեկին:

Խոհի և զգացմունքի արտահայտման զարմանալի անբռնագրոսիկություն կա Բսահակյանի պոեմում՝ միահյուսություն, միաձուլվածք:

Չորրորդ սուրահը կարևոր նշանակություն ունի հասկանալու համար պոեմի ատաղձը: Նա շատ պարագաներում մեզ բացահայտում է, թե ինչն էր Աբու-Լալայի քարավանը սլանում դեպի «Արաբստանի մեծ անապատի դարբասները»... Եվ այդ ճամփին կրկնակի ցատումով դիմում իրեն պատահած հողմերին ու քամիներին.

Արշավե՛ք հողմեր, իմ հոր տան վերա, քանդե՛ք, ավերե՛ք հիմերը նրա,
Եվ փռշին ցրե՛ք մեծ աշխարհով մեկ, – անձայր ճամփան է իմ տունը հիմա:

Այս զայրույթը, ընդվզումը առավել թափ է ստանում հաջորդ՝ Հինգերորդ սուրահում, որպեսզի հաշվեհարդար տեսնի բոլոր այն հանգուցային սկզբունքների և հասարակական հաստատությունների հետ, որ ստեղծել է մարդը իր նմանին ստրկացնելու ու հպատակեցնելու համար:

Եվ սակայն Բսահակյանը սկեպտիկ հայացքով է նայում դեպի այն պայմանական արժեքները, որ մարդկությունը դարեր ի վեր ընդունել է, և ըստ նրա պոեմի հերոսի դրանք իրենց էությանմբ սին են ու կեղծ, այդ թվում և բարեկամ ու ընկեր հասկացությունները.

Բարեկամն ի՞նչ է – լավիդ նախանձող, քայլիդ խուզարկու, բամբասող, ազահ.
Ծանոթ շները չեն հաչում վրադ, ծանոթ մարդիկ են հաչում քո վրա:

Իսկ ընկերը՝

Ծոցիդ մեջ սև օձ, մահիճդ պղծող:

Պոեմի ընդհանրացումներն այնպես են ներգործում ընթերցողի վրա, որ կարծես ճիշտ և ճիշտ այսօրվա համար են գրված: Այո, այսօրվա, և դրան գումարած տասնյակ դարերի փորձությունը, որոնք, ավաղ, միայն հաստատում են Բսահակյանի դրույթները: Նա բնութագրում է ամբոխ, համայնք, համայնական մտածողություն հասկացությունները, իսկ հեղափոխություններ, պատմական անցումներ տեսած հայ ընթերցողների սերունդները (և ոչ միայն հայ) իրապես կարող են հաստատել բանաստեղծի խոսքերի ճշմարտությունը.

*Ի՞նչ է ամբոխը – մեծ հիմարն է նա, ոգին հալածող և տարրը չարի,
Բռնության խարխախ, և՛ սուր երկսայրի, և՛ զայրույթի մեջ գազան վիթխարի:*

*Ի՞նչ է համայնքը – թշնամու բանակ և անհատն այնտեղ անշոթա գերի,
Ե՞րբ է հանդուրժել հոգու թռիչքին և սլացումին վսեմ մտքերի:*

*Նողկալի համայնք, հեղձուցիչ օղակ, քո լավն ու վատը – ահեղ խարագան,
Մի անհուն մկրատ բոլորին խուզող՝ միահավասար և միանման:*

Այս ժխտողական և երիցս իրավացի համատեքստի մեջ Բսահակյանը, ինչքան էլ մեծ հայրենասեր լիներ, այնուամենայնիվ, չէր կարող իր հերոսի անունից չքննադատել ու չդատաւիետել նաև իր հայրենիքը՝ այս էլ քանի դար ընկած օտարի լծի տակ, որը տնական անարդարությունների ներքո, ասես, փորձում էր մի կերպ համակերպվել բռնությանն ու անարդարությանը և հաշտվել իր վիճակի հետ.

Ատում եմ, ավաղ, և՛ հայրենիքը – պերճ արոտավայրը հարուստների ցոփ...

*Ի՞նչ է օրենքը, – մարդկանցից օրհնած, բիրտ ուժեղների այդ սուրը դաժան,
Անզորի գլխին կախված հավիտյան, խեղճին խողխողող, հզորին պաշտպան:*

*...Յոթն անգամ ահա՛ ատում եմ, ատում իշխանությունը – սերունդներ լավող.
Անհագ վաշխառու, անկուշտ ձրիակեր, պատերազմների հավերժ հերյուրող:*

*...Նա հրեշի պես կրծքիս է նստել, բռունցքն է ահեղ սեղմել ճակատիս,
Եվ ամեն քայլիս շղթա է զարկել, փականք է դրել լեզվիս ու մտքիս:*

*...Եվ նզովում եմ իշխանությունը՝ հազարաճիրան մոլի բորենին.
Իր ամեն քայլը՝ արյունի հնձան, ուր տրորում է ծերին, մանուկին:*

Եվ մի թե Բսահակյանը հիմքեր չուներ նզովելու իշխանություններին, որոնց հրամանով կասեցվում էր Արևմտահայաստանի ազատագրման յուրաքանչյուր քայլ, և որը լինելով քրիստոնեական ուղղափառ պետության մարմնացում՝ հանցագործ գործարքի մեջ էր մտել օսմանյան ծայրահեղ ուժերի հետ՝ ճնշելու համար հայոց նորածին ազատագրական շարժումը, որի մի հունդն է բանաստեղծը՝ և՛ հեղափոխական, և՛ վրիժառու, և՛ բնածին նիցշեական... Ակնհայտ է հոգեհարազատությունը բանաստեղծի ճակատագրի և իր գլուխգործոցի միջև, հասկանում ես, որ նման պոեմի ստեղծումը Բսահակյանի համար անհրաժեշտություն էր: Եվ հիշում է՝ «Երեք օր և գումարած ողջ ապրած կյանքը» նրա խոստովանությունը:

Մինչդեռ քարավանը շարունակում է իր երթը և, համընթաց Աբու Մահարու կրքերի շիկացման աստիճանի, այն ավելի ուժգնանում և սլացիկ էր դառնում: Եվ կայր՝ Աբու Մահարու հոգեվիճակի ու քարավանի երթի միջև առավել գորեղացնում է երկի գեղարվեստական կառույցը:

Բսահակյանը զգալի աղքատացրած կլիներ իր պոեմը, եթե այն վերաբերեր սոսկ իր ճակատագրին, և կամ թե միայն իր ազգի ճակատագրին ու նրա դեմ ծառայած քաղաքական խնդիրներին: Այս ամենը, անշուշտ, կա, և այն պոեմի մղիչ ուժն է, ազդակն է: Բայց և ոչ միայն այդ, բայց և ոչ միայն հեղինակի կյանքն ու հարազատ ժողովրդի ճակատագիրը, այլև մարդկության ճակատագիրը, մարդ արարածի էությունը, այն հավիտենական արժեքները, որ թե՛ այսօր, թե՛ դարեր առաջ, իրապես թե պայմանականորեն, ընդունել են հասարակությունն ու մարդը և որոնցով առ այսօր փորձում են շարժվել՝ որպես առաջին կարգի ճշմարտություններ:

Ահա այս սկզբունքները, հասարակության ընդունած կարգի այս խարիսխներն է փորձում վերանայել Բսահակյանի հերոսը, կասկածի տակ առնելով նրանց ինքնությունը, նրանց բարոյականությունն ու կոչումը, որոնք, ի դեպ, գուցե տասը դար առաջ նույն մղումով ու նպատակով փորձել է հերքել ու դրժել արար մեծ պոետը՝ ալ-Մահարին:

Եվ այս մեծ դրժման նպատակը, կրկին եմ ընդգծում, ոչ թե պարզապես մարդուն ժխտելն է ու աշխարհի քանդումը, այլ իրերի դրվածքը փոխելը, մարդուն անկումից փրկելը և դաժան ճշմարտություններ ավետելը, ինչքան էլ դրանք անողոք լինեն: Հիշո՞ւմ եք, ինչ էր ասել պոետը՝ «Բայց ես ուզեցել եմ նոր Ղուրան գրել»:

«Եվ ո՞վ են մարդիկ...», – հազարերորդ անգամ «գայրացած սրտում» հարցում է անում Աբու Մահարին, –

...աղվեսների հոտ, եսամոլ անհուն, ուրացող, մատնիչ,
Անկումիդ ուրախ, արյուններ լակող, գազան մանկասպան, և դահի՛ճ, դահի՛ճ:

Աղքատության մեջ՝ քծնի, վաճառվող, թշվառության մեջ՝ վախկոտ, դավաճան,
Հարստության մեջ՝ լկտի, չարախինդ, և՛ վրիժառու, և՛ ամբարտավան:

Զոհվում է լավը վատերի համար, և վատն ու չարը լլկում են, տանջում՝
Մի բուռ լավերին այս վատ աշխարհում, և կյանքի արտում որոմն է աճում:

Նզովում եմ ձեզ, հեռավոր՝ մարդիկ, ձեր չարն ու բարին, կրոնները ձեր,
Որոնք միմիայն շղթա են կռում և ստրկության կոփում զնդաններ:

Ապիրատ աշխարհ, ուր հզոր ոսկին դարձնում է գողին՝ ազնիվ, բարեհույս,
Ապուշին՝ հանճար, վախկոտին՝ կտրիճ, տգեղին՝ չքնաղ և պոռնիկին՝ կույս:

Մարդկային աշխարհ, արյան բաղանիք, ուր թույլն՝ հանցավոր և հզորն՝ արդար,
Ուր մարդը տխեղձ՝ ինչ որ անում է այս գարշ աշխարհում՝ սոսկ նյութի համար:

Մոսկ շահի համար, շահին միշտ գերի, աստվածացնող թաթը եղեռնի,
Ահա մարդը միշտ – պատկերն աստծու, սակայն իրապես վիժվածք շեյթանի:

...Թե ավելի վատ, ավելի զազիր՝ քան մարդը դաժան – այդ մարդն է նորեն:

Եվ միակ մղիչ ուժը, որ տանում էր առաջ Աբու Մահարուն, ազատության ծառավն էր, բաղձանքը հասնելու մի հանգրվանի, ուր ինքը զգար իրեն ազատ ու ինքնիշխան, չենթարկվող ոչ ոքի՝ «Իմ գլխի վերև չպետք է լինի ո՛չ մի հովանի»:

Քարավանը բերեց-հասցրեց Աբու-Լալային «Արաբստանի մեծ անապատի դարբասների մոտ»։ այս կանգառը պոեմի նախավերջին՝ Յոթերորդ սուրահն է, ուր հիբավի բոլորից առավել բացահայտվում է հերոսի փիլիսոփայության հիմքը, քանզի այստեղ նա, կարծես, ի մի է բերում իր մտքերի փոթորկահույզ օվկիանոսը և պատրաստվում վերջին սլացքին դեպի արևը...

Եվ այսպես, նա ծունկի է իջնում ու խորհում.

Ո՛հ, ի՛նչ ազատ եմ, անպարփակ ազատ. մի՞թե կարող է այս մեծ Սահարան
Պարուրել, գրկել իր ծիրերի մեջ ազատությունը՝ անհուն, անսահման:

Նա հասկանում է, որ այս ազատությունն էլ պայմանական է: Նա գտնում է, որ ձեռք բերած ազատությունը սոսկ իր համար է, իսկ դա դեռ շատ քիչ է, և ահա ինչ է նա աղերսում իր կուռք ազատությունից.

Ո՛վ ազատություն, դու դրախտային չքնաղ վարդերի լուսեղեն բուրմունք:

Քո պերճ վարդերով դո՛ւ պսակիր ինձ, վառի՛ր իմ հոգում ջահերդ հուր-հրան.
Ո՛վ ազատություն, դու դրախտային լույս-բլբուլների անմահ Ալ-Կորան:

Չքնաղ առապար, դու իմաստության ոսկեղեն աշխարհ, հազար ողջունյ թեզ,
Անարատ Բադիե, ուր մարդը մարդուն չի լկել բնավ, հար օրհնյալ լինես:

Տարածվի՛ր անծիր, փռի՛ր ավազիդ դեղին ծովերը ազգերի վրա,
Ծածկիր ողջ մարդկանց, քոչք ու խրճիթներ, գյուղ ու շահաստան, շուկա ու կլա:

Վիշապ հողմիդ հետ ազատությունը թող գահակալե աշխարհը հանուր,
Եվ ոսկեվառե վսեմ արևը՝ ազատությունը աշխարհասփյուռ:

Այսինքն՝ ըստ Բսահակյանի պոեմի հերոսի, միայն ազատության մեջ են գործում Ալ-Կորանի օրենքները: Եվ եթե նա ասում է՝ ես փորձում եմ Կորան ստեղծել, ապա այդ Կորանն ըստ Բսահակյանի պիտի լիներ Ազատության Կորան, այն է՝ աշխարհում Ազատություն հրովարտակող օրենսգիրք:

Եվ միայն այնժամ, երբ ազատությունը «գահակալե աշխարհը հանուր», և՛ ինքը՝ հերոսը, և՛ մարդը, և՛ համայնքը, և՛ աշխարհը համայն կգա իր տեղը, և կտիրե իմաստությունը:

Մի՞թե սա չէր հիմքը Բսահակյանի հերոսի աղոթքի:

Բայց այդ ցանկությունն անհնար էր ու անիրական, և դա Աբու Մահարին շատ լավ էր հասկանում: Արդ, որն էր «Ելքը Եգիպտոսից»:

Եվ Բսահակյանը, իր բազմատանջ հերոսի համար այստեղ մի հանճարեղ հնարք է գտնում: Պոեմի Յոթերորդ սուրահում ազատության տենչը վերափոխվում է

պտոթկումի, մղումի, սլացքի դեպի արևը: Արևն ստանում է փիլիսոփայական-երևակայական, ուտոպիական երազանքի մարմնավորում, ինչին ձգտել է Աբու Մահարու հոգին Առաջին սուրահից մինչև Վերջինը: Արևն է իր մեջ կադապարում երջանկության ու արդարության կիզակետը: Խորհրդանիշը այն իդեալական պատկերացումների, որ փափագեց իր հոգում Աբու Մահարին: Արևը մարդու կյանքի հավիտյան կենարար աղբյուրն է: Արևը մարմնացումն է նոր, լուսավոր կյանքի համար մարդու տաճած հույսի: Արևը Բսահակյանի պոեմում ազատության հումանիշն է: Եթե Աբու Մահարին ուզում էր, երագում էր ազատության տիրակալությունն հաստատել երկրի վրա, ապա արևի խորհուրդը կրում է անիրականանալի իրականացման գաղափարը: Եվ Աբու Մահարու արևապաշտությունը ազատաբաղձության մի նոր, ավելի բարձր աստիճան է: Նրա հոգին կարոտ է ազատությունն ստանալու և ազատություն տարածելու՝ արևի միջոցով իր «արևի քաղաքը» կառուցելու: Այն խոսքերը, որ Աբու Մահարին ուղղում է արևին, մեզ ինչ-որ տեղ թույլ է տալիս համարելու, որ իր նոր Կորանում Աբու Մահարին նոր, բայց և Արևելքի համար շատ հին (հիշենք Ջրադաշտին ու իր ուսմունքը), կրոն է ընդունում՝ Արևապաշտություն:

*Մալա՛մ քեզ, արև՛, շուքքը բյուրաբյուր, դու աստծուց հզոր, դու կյանքի աղբյուր,
Դու, իմ անմահ մայր, մայրական դու գիրկ, դու միակ բարի, դու միակ սուրբ, սուրբ:*

*Տիեզերական դու բաժակ անհուն՝ ոսկի արբեցման և երանության,
Դու հրճվանքի, հրապույրների հրեղեն զինու դու անհուն օվկիան:*

Այս հատվածում, երկու անգամ, մենախոսության սկզբում և վերջում, Բսահակյանը խոսքեր է ասում, որ մինչ այդ երբեք չէր արտաբերել: Նկատի ունենք արևին ուղղված Բսահակյանի խոսքը. «Դու աստծուց հզոր»: Բսահակյանը, անշուշտ, հրաշալի պատկերացում է, թե ինչ է ասում: Ուրեմն սա բանաստեղծի հիշատակած նոր Կորանի տառապած տողն է, ոչ թե պոետական գեղեցիկ խոսքի արգասիք: Հետևաբար, Բսահակյանը արևին մի այնպիսի գործությամբ է օժտում, որ նա «աստծուց գորեղ է» դառնում: Այն հույսերը, որոնք բանաստեղծը տարիներ շարունակ կապել է Աստծու անվան հետ (խոսքը, բնականաբար, հարազատ ժողովրդին սատար կանգնելու մասին է), այժմ նրա հերոսը նոր հույսով, նոր հավատով, նոր հայացքով ուղղվում է դեպի անմար Լուսատուն: Տվյալ դեպքում արևն է ազատության ճամփան, և արևը, ըստ Աբու-Լալայի, ոչ միայն մարդուց, մարդկությունից, համայնքից է ուժեղ, այլև գորեղ է անգամ Աստծուց:

Ինքնին այս գաղափարը և՛ նոր է, և՛ կարոտ մեկնաբանման: Գուցեն համեմատելով արևին Աստծու հետ՝ Բսահակյանը նույնացնում է նրանց ինչ-որ մի հանգույցում: Չէ՞ որ, ի վերջո, նրանք նույն դերն են խաղում, լույս են տալիս մարդուն, աշխարհին, կյանք են տալիս: Եվ հիշենք, որ դրախտից դեպի Աստված տանող վերջին կիզակետում՝ Էմպիրեյում, Դանթեն իր «Աստվածային կատակերգությունում» Աստծու խորհրդանիշը պատկերում է որպես մի գորեղ լույս, սպիտակ լույս, չորս կողմը պայծառություն տարածող. իսկ ի՞նչ էր դա, եթե ոչ արևը:

Եվ սակայն Բասհակյանը, իր հերոսին դեպի արևը տանելով, տանում է և դեպի Աստված: Եվ պոեմում կատարում է հեղափոխական շրջադարձ: Տանել դեպի Աստված քրիստոնյա բանաստեղծի համար կնշանակեր տանել դեպի հնագանդություն, համբերություն, համերաշխություն և, վերջապես, դեպի լուսաճաճանչ երրորդություն՝ այնպես, ինչպես, ի դեպ, Դանթեի մոտ է: Մինչդեռ տանել դեպի արևը, ըստ Բասհակյանի, կնշանակեր տանել դեպի նորն ու անհայտը, հրե արարումով հասնել մեծ վերափոխության՝ «Նոր կյանքի» ստեղծման... Ահա ինչ խոսքերով է արևին դիմում իր վերջին մենախոսությունում Բասհակյանի հերոսը.

*Քո վսեմությամբ հարբեցրո՛ւ ինձ, հարբեցրո՛ւ ինձ լույս-հիացքներով,
Խավարների դեմ անհաղթ ախոյան, գարունների մայր, ուրախության ծով:*

*Դու միակ բարի, դու միակ իմ սեր, դու միայն սո՛ւրբ, սո՛ւրբ, մայրակա՛ն դու գիրկ,
Դու հավետ զոռոտ, մահը խորտակող, դու գերահրաշ, միակ գեղեցիկ:*

...Երջանկափյուռ քո լույս-գիրկը բաց, ես սիրաբորբոք թռչում եմ դեպ քեզ:

*Եվ թող իլանան իմ ակնջները՝ աղմուկն աշխարհի չլսեմ հավետ,
Հավետ կուրանամ աշխարհի համար, մարդկանց տեսնելու այլ չնայեմ ետ:*

*Դեպի արևը դարեր ու դարեր թռի՛ր, սլացի՛ր, ազնիվ քարավան,
Նրա լուսեղեն, բոցեղեն գրկում, որ արևանամ և հավերժանամ:*

Այլևս կանգառ չկար, այլևս երկմտելու կամ կշռադատելու հարկ չկար, սա մեծ բանաստեղծի վերջին խորհրդածություն-մենախոսությունն էր: Եվ նա այլևս չէր խոսելու, այլ՝ միայն թռիչք, արարիչ թռիչք դեպի արևը:

Պոեմի եզրափակիչ՝ Վերջին սուրահը, պատկերում է Աբու Մահարու մղումը, սլացքը, թռիչքը դեպի արևը: Ամեն ինչ արդեն ասված է յոթ սուրահներում. Աբու Մահարու հոգին լրիվ բացահայտվեց, և նրա մտքերը, ժխտումն ու մերժումը բերին այս վիթխարի ժայթքումին դեպի Արևը...

Եվ այլևս խոսք չկա. միայն շարժում է.

*Եվ ոչ մի սամում հրաշունչ թևով չէր կարող հասնել նրանց արշավին,
Նրանց թռիչքին չէր կարող հասնել սլացքը նետի վայրի բեղունին:*

Սակայն Բասհակյանն Բասհակյան չէր լինի, եթե իր հերոսի թռիչքի պահին մի նոր քնարական գայթակղություն ի հայտ չբերեր.

*Վուհաղիններից զով այուքն էր բերում վատ քասիդները այրող կարոտի,
Դայլայլում էին կաթնաղբյուրները երազներն իրենց կուսական սրտի:*

*Եվ հեթաթների լույս փերիները մայր-արմավենու քնքուշ սոսյունով
Համբույր ու ողջույն ուղարկում էին և կանչում նրան գաղտնի խոստումով:*

*Բայց Աբու-Լալան չէր ուզում լսել սիրո ողջունին, գողտրիկ սոսավին,
Թռչում էր անհագ՝ դեպի արևը, և ինքն էլ պայծառ՝ նման արևին:*

Եզրափակիչ այս տողերը ևս մի կարևոր միտք են պարփակում. Իսահակյանն իր հերոսին՝ մարդուն բարձրացնում է մինչև Արև հասկացության աստիճանը. «Եվ ինքն էլ պայծառ՝ նման արևին»:

Իսկ պոեմի ամենավերջին տողերում փոքր հիշեցում է անում, որ Աբու Մահարին պարզապես մարդ չէր, այլ՝ բանաստեղծ.

*Եվ ոսկեփրփուր ծիրանին ուսին Աբու Մահարին, մեծ բանաստեղծը,
Թռչում էր անդուլ՝ հաղթական ու վեհ, դեպի արևը, անմահ արևը...*

Առանձին քննարկման նյութ է «Աբու-Լալա Մահարի» պոեմի պոետիկան, նրա կերտման արվեստը: Արդեն հենց առաջին տողերի ընթերցումից պարզ է դառնում, որ հայ պոեզիայում նման երկ չի եղել, և ոչ միայն ասելիքի, խոհերի հագեցվածության ու փիլիսոփայական ուղղվածության տեսակետից, այլև պոետական արվեստի կատարելության տեսակետից: Սա և՛ բանաստեղծական պատկերների կերտման, փոխաբերությունների շքահանդես է, և՛ հայ լեզվի ճոխության, գեղեցկության ու վեհության մի փառահեղ շքերթ:

Իսկ մեղեդայնության տեսակետից կա՞ արդյոք մի երկ, որ այդքան համահունչ լինի ստեղծագործության պատկերներին և ասելիքին իր հնչյունային կազմով: Կարդում ես, և թվում է, թե լսում ես քարավանի ռիթմը, նրա ընթացքի արձագանքը: Այս աստիճան մեղեդայնություն այսպիսի մի բարդ փիլիսոփայական պոեմում ինքնին բացարձակ եզակի երևույթ է: Կարելի է ասել, պոեմը ստեղծելիս Իսահակյանը վերացել է իրականությունից, Աբու-Լալայի մենախոսությունների յուրաքանչյուր տող մտորում է, հանճարեղ մտքի անդուլ աշխատանքի արգասիք: Բազում աֆորիզմներ սփռված են պոեմում, ինչպես աստղերը գիշերային երկնքում և կարծես ոչ թե Մինայի ավազուտներով, այլ աստղային երկնքով է ընթանում Մահարու քարավանը, անջնջելի հետք թողնելով երկնային բարձունքներում.

*...Գոհար աստղերի քարավանները թափառում էին երկնի ճամփերով,
Եվ դողանջում էր ողջ երկինքն անհուն՝ աստղերի շքեղ, անշեջ դաշնակով:*

*...Եվ լուսինն, ինչպես ջեննեթի մատաղ փերիի կուրծքը՝ չքնաղ լուսավառ՝
Մերթ ամաչելով պահվում էր ամպում և մերթ թրթռուն փայլում էր պայծառ:*

*...Գիշերն ահարկու՝ և սև, և հսկա մի չղջիկի պես թևերը փռեց.
Անձիր թևերը իջան, ծածկեցին քարավանն, ուղին և դաշտերն անափ:*

Իսկ քարավանի ընթացքը, սլացքը կամ թոփչքը ճշմարտացի հաղորդում են մեծ քարավանապետի հոգեկան վիճակը: Քարավանն այն միակ գործող անձն է, և ուղտերը՝ միակ կենդանի շունչը, որ ուղեկցում են Աբու Մահարուն պոեմի ողջ ընթացքում: Քարավանը Իսահակյանի հանճարեղ մտքերը հավաքագրող և ուղղութ-

յուն տվող մի յուրահատուկ կերպար-խորհրդանիշ է, նրա քնարական զինանոցի մի կարևոր մասը, որն իր վրա վերցնելով բանաստեղծի հոգու թարգմանը լինելու պարտավորությունը, իրավամբ պատվով է կատարում այդ դերը: Նա անմիջաբար ու զգայուն արձագանքում է բանաստեղծի հույզերին ու ապրումներին, և նրա առջև է միայն իր սիրտը բացում Աբու Մահարին:

*...Եվ քարավանը մեղմիկ կարկաչով չափում էր ուղին ոլոր ու մոլոր,
Դեպի երազուն և կապույտ հեռուն հոսում էր առաջ հանգիստ ու անդորր:*

*Զանգակներն, ասես, հեկեկում էին և ծորում հատ-հատ հնչուն արցունքներ,
Քարավանն, ասես, լալիս էր անուշ, ինչ որ Մահարին սիրել, լքել էր:*

*...Քարավանն հեստոտ օրեր-գիշերներ լափում էր ուղին ոլոր ու մոլոր,
Եվ խռով հոգով Աբու Մահարին խորհում էր ցասկոտ՝ ճակատը խալոր:*

*Խոլ քարավանը նրա խոհերի՝ բազեների պես ծեծկված մրրկով,
Մլանում էին՝ խոփվ ու ցրիվ՝ մի լույս-հանգրվան գտնելու հեքով:*

Այս հատվածում մի բացահայտում էլ է Բսահակյանն անում. «Խոլ քարավանը նրա խոհերի»: Այս տողերը հաստատում են մեր դրույթը, որ միևնույն է, պոեմի քարավանը երևակայական քարավան էր, և ինչպես հեղինակն է խոստովանում՝ քարավանը Աբու Մահարու խոհերի քարավանն է, նրա մտորումների շարքը: Մենք կարող ենք հավաստել, որ համաշխարհային պոեզիայում չի ստեղծվել քարավանի նման վես ու վսեմ կերպար-խորհրդանիշ, ինչպես Բսահակյանի պոեմում:

Երբեմն կարող է թվալ, թե «Աբու-Լալա Մահարին» Բսահակյանի ամենա ոչ հայկական, ոչ ազգային պոեմն է: Քանզի այստեղ ո՛չ թեման, ո՛չ նյութն են հայկական և ո՛չ էլ զուտ հայկական խնդիրներ են արծարծվում. դրանք դուրս են գալիս ազգային գաղափարախոսության ոլորտից, և առնչվում են համամարդկային պրոբլեմներին: Այս և նման տեսակետներին բոլորից լավ պատասխանում է ինքը՝ Բսահակյանը, Հովհաննես Ավագյանին 1926 թ. հունվարի 31-ին գրած նամակում, ուր ի մի բերելով իր արածը, նա ասում է. «Հաջողված եմ թե ոչ, չգիտեմ. ճշմարտությունն այն է, որ ես դժբախտաբար շա՛տ տառապած մարդ եմ... բանտեր նստած, քստրված, վտարանդի, միշտ անապահով վիճակ, ունեցել եմ շա՛տ թանկագին մարդկային կորուստներ, և վերջապես հայության աղետը, որ մոռցնել է տալիս անհատական վիշտ ու ցավ: Եվ «Մահարին» նրանց արդյունքն է:

Պետք չէ, որ կոտորածները երգեմ, ցույց տալու համար իմ վիշտը (Միամանթոյից հետո դժվար է երգել), սակայն «Աբու Լալայիս» ռուս և գերման թարգմանությունների մասին գրախոսները ասացին, որ միայն հայ մարդը կարող է այսքան սև հոռետես լինել: Անբացատրելի, զարհուրելի ջարդերը միայն կարող են այսպես մթազնել մի հոգի, հայ մարդու հոգին...

Մյուսն, սիրելի բարեկամ»²²:

ГЕРОЙ ПОЭМЫ “АБУЛ АЛА МААРИ” И ЕЕ АВТОР

АВИК ИСААКЯН

Р е з ю м е

Поэма Аветика Исаакяна “Абул Ала Маари” (1910) является шедевром армянской литературы, переведенным на многие языки мира. Поэма была создана в судьбоносный период жизни поэта – перед долгосрочным отъездом с родины, где его ожидал судебный процесс за активное участие в национально-освободительном движении армянского народа. Драматические чувства столкновения индивидуума, великого создателя с общественным строем наилучшим образом отразились в поэме “Абул Ала Маари”. Герой Исаакяна не признавал, восставал против законов государства, власти, мироздания, продажных устоев, призванных поработать человека. Герой Исаакяна ищет пути спасения человека. “Абул Ала Маари” не есть призыв к бегству, – это преобразование, возрождение мира посредством абсолютного отрицания существующего миропорядка. Его караван вышел в аравийские пустыни не из Багдада, а из изжившего свой век общества – и устремился в новый, неизведанный мир. Значителен прообраз героя поэмы – гениального арабского поэта и философа-суфиста X–XI веков Абу-ль-Ала аль-Маарри. В его поэтических произведениях много философских тем и мотивов, которые ассоциируются с творчеством Исаакяна. Проводятся параллели между его творчеством и сочинениями Аветика Исаакяна. Автор поэмы воплощал в себе чаяния поэтов всех времен – жаждущих света и справедливости, восстающих против лжи и деспотии, великих отрицателей, против которых направлен меч “сильных мира сего”. Поэма “Абул Ала Маари” стала одним из величайших творений армянской литературы, ценность которой непреходяща.

THE CHARACTER OF THE POEM “ABOOL-ALA-MAHARI” AND ITS AUTHOR

AVIK ISAHAKYAN

S u m m a r y

Avetik Isahakyan’s poem “*Abool-Ala-Mahari*” (1910) is the masterpiece of the Armenian literature translated into many languages of the world. The poem created in the crucial period of the poet’s life,

²² Ա Վ Ի Ի ս ա հ ա կ յ ա ն. Երկերի ժողովածու 6 հատորով, հ. VI, էջ 217:

just before his long-term departure from the Motherland where he might be imprisoned for his active participation in the national-liberation movement of the Armenians. The great creator's dramatic feelings of the collision with the social system have been brilliantly expressed in the poem "*Abool-Ala-Mahari*". The character was in strong opposition with the state laws, authorities, corruptible moral principles aimed to enslave a person. Isahakyan's character is in search of the ways for the person's salvation. "*Abool-Ala-Mahari*" is not an appeal for escape. It is a transformation, world rebirth by means of an absolute negation of the existing world-order. His caravan has not left Bagdad for the Arabian Desert but it has come from the obsolete society and it was rushing to a new and unknown world. The prototype of the poem's character is considerable the 10th-11th centuries' outstanding Arabic poet and philosopher, sophist – Aboo-el-alia-al-Maharri. There are many philosophical themes and motives, associated with Isahakyan's creative work in his poetry. Parallels between his works and Isahakyan's poetry are also drawn. The author of the poem embodied the hopes and desires of the poets of all times who had longed for the light and justice, confronting falsehood and despotism, these great refuters, at whom "the world's strongest men had pointed the sword to". The poem "*Abool-Ala-Mahari*" became one of the greatest creations of the Armenian literature. Its significance is invaluable.